

**ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ  
ԵՎ ՆՈՐ ԶԵՎԱՎՈՐՎՈՂ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ  
Դավիթ Յովհաննիսյան**

Լիբանանա-իսրայելյան վերջին ճգնաժամը նոր առիթ դարձավ, որպեսզի միջազգային հանրությունը վերստին անդրադառնա ժամանակակից աշխարհի ամենաբարդ խնդիրներից մեկի՝ ինքնիշխանության հիմնահարցի քննարկմանը:

Ինչպես հայտնի է, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1701 որոշումը երկար վեճերից, քաղաքական եւ դիվանագիտական բազմաթիվ գործողություններից հետո ձեւավորվեց այն միտումով, որ նախատեսվող միջոցառումներն ուղղված լինեն ոչ միայն ռազմական գործողությունների դադարեցմանը, խաղաղության հաստատմանը, այլ նաեւ (եւ գուցե՝ առաջին հերթին) Լիբանանի ինքնիշխանության վերականգնմանը եւ ամրապնդմանը: Լիբանանի ինքնիշխանության խնդիրը վերջին շրջանում սովորաբար կապում են «Հիզբալլահ» կազմակերպության հետ, սակայն հարկ է նշել, որ այս համայնքային քաղաքական կառուցվածք ունեցող պետության ինքնիշխանությանը երկրի պատմության տարբեր փուլերում այլ աղբյուրներից էլ են նման վտանգներ սպառնացել:

Սակայն ինքնիշխանության խնդիրը, որն առանձնակի արդիականություն է ձեռք բերել հատկապես Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ քայքայվեց ուժերի հավասարակշռության վրա հիմնված միջազգային համակարգը, շատ ավելի բարդ դրսեւորումներ ունի եւ չի սահմանափակվում միայն նման ձեւաչափով, երբ պետության սահմաններում գործող ցանցային կառույցն աստիճանաբար իր ձեռքն է վերցնում երկրի կառավարման կարեւոր լծակները:

Անշուշտ, մարդկության պատմության ընթացքում բազմաթիվ են այն օրինակները, երբ որեւէ մեծ եւ հզոր պետություն իրեն է ենթարկում մեկ այլ՝ ավելի թույլ եւ փոքր պետության, սակայն այդ դեպքերը նախկինում ստանում էին համապատասխան ձեւակերպումներ. պարտություն կրած կամ ենթարկված պետությունները պատերազմի ավարտից հետո կան զիջում էին իրենց տարածքի որոշակի մասը, տուրք էին վճարում, կան ուղղակի դադարում էին գոյություն ունենալ: Ավելի ուշ շրջանում դրանք դառնում էին գաղութ կամ կոչվում էին մանդատային երկիր եւ այլն: Բոլոր դեպքերում, կախյալ վիճակը, ինքնիշխանության, անկախության զիջումը ստանում էին որոշակի հստակ ձեւակերպում:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ ձեւավորվեց Միավորված Ազգերի Կազմակերպությունը, վերջապես որդեգրվեց այն սկզբունքը, որի անհրաժեշտության մասին բազմաթիվ փիլիսոփաներ, իրավագետներ եւ քաղաքական գործիչներ խոսում էին դեռեւս նապոլեոնյան կայսրության կործանումից հետո եւ որի կիրառման անհաջող փորձեր ձեռնարկվեցին արդեն Ազգերի լիգայի ստեղծմամբ: Խոսքը 20-րդ դարի երկրորդ կեսին ինքնիշխանության ընդունված ձեւակերպման եւ վերջինիս՝ որպես հիմնարար արժեք ընկալման մասին է:

«Սուվերենություն» եզրը առաջացել է ֆրանսերեն *souverainite*՝ (գերագույն իշխանություն) բառից: Պետության սուվերենություն (հայերեն ընդունված եզրն է՝ ինքնիշխանություն) հասկացությունը միջազգային իրավունքի կողմից բնորոշվում է որպես պետության անկախություն արտաքին քաղաքականության ոլորտում եւ գերակայություն ներքին գործերում: Եվ հենց այս իմաստով՝ պետության սուվերենությունը (կամ ինքնիշխանությունը) հարգելը հանդիսանում է ժամանակակից միջազգային իրավունքի եւ միջազգային հարաբերությունների հիմնական սկզբունքը, եւ դա ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրության եւ բազմաթիվ այլ միջազգային փաստաթղթերում:

Վերը բերված սահմանումը ինքնիշխանության ընդունված հանրագիտարանային եւ բառարանային ձեւակերպումն է: Դժվար չէ տեսնել, որ այն ներկայումս չի կարող բնորոշել նույնիսկ այնպիսի գերիզոր պետության ինքնիշխանության էությունը, ինչպիսին է Միացյալ Նահանգները:

Սառը պատերազմի ժամանակ ձեւավորված աշխարհակարգի փլուզումը, ի թիվս բազմաթիվ այլ հետեւանքների, հանգեցրեց նաեւ ինքնիշխանության հիմնադրույթի վերանայմանը կամ վերաիմաստավորմանը:

Պետությունների ինքնիշխանությունը հարգելու՝ որպես միջպետական հարաբերությունների հիմնական սկզբունքի ոչ իրատեսական լինելու մասին վեճերը բռնկվեցին հատկապես իրաքյան պատերազմի նախօրյակին, երբ Միացյալ Նահանգները, անտեսելով Իրաքի անկախ եւ ինքնիշխան պետություն լինելը, այսինքն՝ վերջինիս ինքնիշխանությունը հարգելու սկզբունքը, ինչպես եւ՝ միջազգային հասարակական կարծիքը, ՄԱԿ-ի կանոնադրությունը, դաշնակից պետությունների բացասական դիրքորոշումը, միանձնյա որոշում կայացրեց իր բանակն ուղարկել մի երկիր, որը Ծոցի պատերազմում կրած պարտությունից եւ իր՝ այդ պատերազմի համար պատիժը կրելուց հետո, ոչ մի միջազգային օրենք կամ պայմանագիր չէր խախտել. միակ «հիմնավորումն» այն էր, որ ԱՄՆ-ը կասկածում է Սադամ Յուսեյնին զանգվածային ոչնչացման զենք ունենալու մեջ:

Դրանով Միացյալ Նահանգները կատարեց շատ ծանր հետեւանքներ ունեցող քայլ. այն մերժեց պետությունների ինքնիշխանությունը հարգելու սկզբունքը՝ թերեւս առանց գիտակցելու, որ դրանով իսկ հրաժարվում է

միջազգային համակարգի գոյությունն ապահովող հիմնարար արժեքներից մեկից:

Ձանգվածային միջազգային դիմադրությունը Միացյալ Նահանգների նման քաղաքականությանը՝ առավելապես պայմանավորված է հաստատված եւ նախկինում իր էֆեկտիվությունն ապահոված արժեհամակարգը պաշտպանելու ձգտմամբ եւ ոչ այնքան պետությունների աշխարհաքաղաքական շահերով կամ նավթագազային հաշվարկներով: Հրաժարվել նման արժեքներից՝ կնշանակի համեմատաբար կազմակերպված աշխարհը վերածել քաոսի: Հին արժեքների փոխարեն, որոնք ընկալելի են մեծամասնության կողմից, այս դեպքում չի առաջարկվում որեւէ համարժեք փոխարինող համակարգ, այլ ասվում է, թե քանի որ ամերիկյան արժեքները, որոնց հիման վրա կառուցվել է աշխարհի ամենաառաջադեմ, զարգացած եւ արդար հասարակությունը, ունիվերսալ բնույթ ունեն, դրանք պետք է դառնան նոր միջազգային համակարգի հիմք:

Այս հիմնադրությից բխում է հաջորդը՝ Միավորված Ազգերի Կազմակերպությունը, որն անհրաժեշտ էր այն պատմական ժամանակաշրջանում, երբ մրցակցություն կար երկու արժեքային համակարգերի՝ արեւմտյանի եւ խորհրդայինի միջեւ, այլեւս ավելորդություն է եւ նույնիսկ վտանգավոր, քանի որ այս միջազգային ատյանն օգտագործվում է որպես ապաստարան ունիվերսալ արժեքներն ընդունելուց խուսափողների համար, հնարավորություն է տալիս «պաշտել հին աստվածներին», որոնց թվին է պատկանում նաեւ սուվերենության սկզբունքը:

Հաջորդ դեպքը բավականին տարբերվում է նախորդ երկուսից, քանի որ առնչվում է մեկ այլ հիմնարար արժեքի հետ:

Ինքնիշխանության հիմնահարցը նորից իր ողջ արդիականությամբ առաջ եկավ վերջին երկու տարիների ընթացքում, երբ համաաշխարհային քաղաքականության ուշադրության կենտրոնում հայտնվեց Իրանի միջուկային ծրագրի իրականացման խնդիրը:

Թվում է, թե ցանկացած երկիր կարող է զարգացնել իր երկրի էներգետիկ ներուժը այն ձեւով եւ ուղղությամբ, որով ինքն է նպատակահարմար գտնում:

Նույնը վերաբերում է նաեւ պետության գիտության զարգացմանը եւ այլ ենթակառուցվածքային հնարավորություններին:

Սակայն այս անգամ եւս Միացյալ Նահանգները կասկածում է, որ Իրանը ուրանի հարստացման ծրագիրն իրականացնում է ռազմական նպատակներով եւ, հիմնվելով այս կասկածի վրա, ձգտում է կանխել եւ արգելել դա: Իհարկե, չափազանց կարելու է, որ Միացյալ Նահանգներն այս դեպքում ընտրել է այլ գործելակերպ՝ շեշտը դնելով դիվանագիտական հնարավորությունների օգտագործման եւ ՄԱԿ-ի հեղինակությունը վկայակոչելու վրա: Եվ այս դեպքում դա հնարավոր է դառնում

այն պատճառով, որ խնդիրն անմիջականորեն կապված է մարդկության լինել-չլինելու հիմնահարցի հետ:

1945թ., երբ Միացյալ Նահանգներն ատոմային ռմբակոծության ենթարկեց ճապոնական Չիրոսիմա եւ Նագասակի քաղաքները, մարդկությունը, տեսնելով, թե ինչ մահացու վտանգ է իրեն սպառնում, որդեգրեց եւս մեկ հիմնարար արժեք՝ այս անգամ Միջուկային զենք չտարածելու մասին պայմանագրի տեսքով: Իսկ 1962թ. Կարիբյան ճգնաժամի դժվարին հաղթահարումից հետո սառը պատերազմի ժամանակների երկու դիմակայող ռազմաքաղաքական միությունների՝ ՆԱՏՕ-ի եւ Վարշավյան պայմանագրի պետությունների միջեւ ձեռք բերված պարտավորությունը՝ իրար նկատմամբ զանգվածային ոչնչացման զենք չկիրառելու վերաբերյալ, զօծեց այս նոր հիմնարար արժեքի գործողության շրջանակները:

Չիչեցնենք, որ համաձայն 1968թ. Միջուկային զենք չտարածելու մասին պայմանագրի (որը 190-ից ավելի պետություններ են ստորագրել), միջուկային պետությունները պարտավորվում են չտալ ոչ միջուկային պետություններին միջուկային զենք կամ դրա ստեղծման տեխնոլոգիաներ, իսկ ոչ միջուկային պետությունները պարտավորվում են ձեռք չբերել, չարտադրել, չփորձարկել միջուկային զենք, ինչպես նաեւ տալ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ համագործակցելու այնպիսի երաշխիքներ, որոնք ապահովեն այս երկրների միջուկային ծրագրերի վերահսկելիությունը:

Պայմանագիրը որեւէ պետության չի արգելում միջուկային ուլորտում գիտական ուսումնասիրություն եւ հետազոտություններ իրականացնել, ինչպես նաեւ խաղաղ նպատակներով միջուկային էներգետիկա զարգացնել:

Ակնհայտ է, որ այս դեպքում նախկին շրջանից ժառանգած արժեքային համակարգի երկու հիմնարար տարրեր՝ ինքնիշխանությունը եւ միջուկային տեխնոլոգիաներ չտարածելը, հակասում են իրար, ինչը եւ հնարավորություն է տալիս Միացյալ Նահանգներին այս հարցում դաշնակիցներ գտնել, իսկ Անվտանգության խորհրդի մյուս մշտական անդամներին՝ որոշ վերապահումներով, սակայն ընդունել ԱՄՆ-ի տեսակետը:

Անշուշտ, ինքնիշխանության սկզբունքը կասկածի տակ դնող վերը դիտարկված երեք դեպքերը չեն ընդգրկում այդ հիմնարար արժեքին «սպառնացող» բոլոր վտանգները:

Սակայն հարցի էությունը շատ ավելի խորն է. ամենայն հավանականությամբ, նոր դարաշրջանի ամենակարեւոր հարցն այն է, թե երբ, ինչպես եւ, հատկապես, ում ազդեցության տակ է վերածելվելու հին եւ արդեն ակնհայտորեն հնացած արժեքային համակարգը, քանի որ դրանից են կախված նոր արժեհամակարգի ձեւն ու բովանդակությունը:

**ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ԵՎ  
ՆՐԱ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ  
Սեւակ Սարուխանյան**

*«Չիզբալլահի» պայմանական հաջողությունը Իսրայելի հետ պատերազմում որոշակիորեն ամրապնդեց Իրանի դիրքերն ինչպես տարածաշրջանում, այնպես էլ իր միջուկային ծրագրի շուրջ ընթացող բանակցություններում: Միեւնույն ժամանակ, Իրանը մերժեց միջազգային «վեցնյակի»՝ միջուկային հիմնախնդրի լուծման առաջարկությունները, որը մատնանշում է նոր միջազգային զարգացումներ այս երկրի շուրջ:*

**Իրանը եւ մերձավորարեւելյան պատերազմը**

Պատերազմը «Չիզբալլահի» եւ Իսրայելի միջեւ սկսվեց Իրանի կողմից «վեցնյակի» առաջարկությունների մերժումից մեկ օր առաջ, որը, փաստորեն, կաշկանդեց միջազգային հանրությանը՝ Իրանի միջուկային հիմնախնդիրը որպես առաջնային հարց ներկայացնել Սանկտ Պետերբուրգում ընթացող Մեծ ութնյակի գագաթաժողովում, ապա եւ ՄԱԿ ԱԽ նիստում: Ըստ էության, պատերազմը Մերձավոր Արեւելքում Իրանի միջուկային հիմնախնդիրն իր հրատապությամբ մղեց միջազգային հանրության ուշադրության երկրորդ պլան: Այսինքն՝ պատերազմի սկիզբը որոշակի դրական հետեւանք ունեցավ Իրանի համար, որի միջուկային հիմնախնդրի լուծման ժամկետը տեղափոխվեց մինչեւ օգոստոսի 31: Սակայն կասկածից վեր է, որ «Չիզբալլահի» լիակատար ջախջախումը կարող էր Իրանին ավելի մեծ հարված հասցնել, քան միջուկային հիմնախնդրի վերաբերյալ Մեծ ութնյակի կողմից համապատասխան կոշտ հայտարարության ընդունումը: Սակայն պատերազմի արդյունքները մեծ մասամբ դրական հետեւանքներ ունեցան Իրանի համար.

1. *Ընդհանուր շիական ճակատի ձեւավորման ավարտ.* Մինչ ԱՄՆ կողմից Աֆղանստանի եւ Իրաքի վրա հարձակումը, շիաներն իրենց քաղաքական ազդեցությամբ բավական փոքր մասնակցություն ունեին տարածաշրջանային զարգացումներում. Իրանը սեղմված էր թալիբան-

յան Աֆղանստանի եւ սադանյան Իրաքի միջեւ, Իրաքի շիա մահմեդականները ճնշված էին սուլունի փոքրամասնության կողմից, Լիբանանում «Չիզբալլահի» աստիճանաբար նմանվում էր քաղաքական հարթակում գործող ոչ մեծաքանակ կուսակցության: Վերջին 5 տարիների ընթացքում, իբրեւ հետեւանք ԱՄՆ քաղաքականության, տարածաշրջանի հիմնական դերակատարն է դարձել Իրանը: Իր հերթին, շիական համայնքը տիրապետում է հիմնական քաղաքական եւ ռազմական լծակներին Իրաքում: Վերջին մերձավորարեւելյան պատերազմը «Չիզբալլահին» վերածեց Լիբանանի ամենաազդեցիկ եւ մարտունակ ուժի: Փաստորեն, 2006-ին ավարտվեց ընդհանուր շիական եւ իրանամետ ռազմաքաղաքական առանցքի ձեւավորումը տարածաշրջանում, որն Իրանին ավելի քան անհրաժեշտ է թե՛ Արեւմուտքի հետ իր բանակցություններում, թե՛ առավել եւս ԱՄՆ/Իսրայելի հետ հնարավոր բախման պարագայում:

2. «Չիզբալլահի» ռազմականացում. Առնվազն վերջին տասը տարում «Չիզբալլահի» հիմնականում դադարեցրել էր ահաբեկչական ակցիաների իրականացման քաղաքականությունը եւ զբաղված էր, առաջին հերթին, ներքաղաքական գործունեությամբ, ինչպես նաեւ իրանական աջակցությամբ սեփական ռազմուժը զարգացնելով: «Չիզբալլահի» վերջին հակամարտությունը Իսրայելի հետ հանդիսացավ ապացույցն այն բանի, որ ծախսված գումարների<sup>1</sup> եւ ստացված զինատեսակների արդյունավետությունը բավական մեծ է: Միեւնույն ժամանակ, Իսրայելի հետ պատերազմը հնարավորություն տվեց «Չիզբալլ-

<sup>1</sup> Իրանի կողմից «Չիզբալլահի» ֆինանսավորումը վերջին տասնամյակի ընթացքում կազմել է տարեկան մոտավորապես 100 մլն ԱՄՆ դոլար: Պատերազմից հետո «Չիզբալլահի» հայտարարեց, որ ռմբահարումներից տուժածներին գալիք 4 ամիսների ընթացքում բաժանվելու է ավելի քան 800 մլն ԱՄՆ դոլար: Սա միայն «հումանիտար» ծախսերն են: Ակնհայտ է, որ հսկայական գումարներ հատկացվելու են նաեւ ռազմական պոտենցիալի վերականգնմանը: Միեւնույն ժամանակ, անկասկած է, որ վերը նշված հատկացումների մեծ մասը ստացվելու է հենց Թեհրանից: Հաշվի առնելով, որ նման գումարների հատկացումն անհնար է միայն Մ.Ա.հնադինեժադի որոշմամբ, առանց հոգեւոր ղեկավարության համաձայնության եւ աջակցության, կարելի է ենթադրել, որ «Չիզբալլահի» հետագա վերազինումը եւ դրա սպասվելիք օգտագործումը հնարավոր իրանա-ամերիկյան/իսրայելական կոնֆլիկտում, արդեն իսկ ընդհանուր իրանական արտաքին քաղաքական գծի անքակտելի մասն են:

լահիմ» վերադառնալ ռազմական եւ խափանարարական գործունեությանը, որը նույնպես Իրանին անհրաժեշտ կլինի ԱՄՆ/Իսրայելի հետ ռազմական բախման կամ էլ այդ բախումից խուսափելու համար:

3. *Սեփական վարկանիշի բարձրացում*. Պատերազմի ժամանակ եւ դրանից հետո ակնհայտ դարձավ, որ ԱՄՆ-ը եւ ցանկացած այլ պետություն, այդ թվում նաեւ տարածաշրջանային, գրեթե ոչ մի լծակ չունեն, որոնք կարող են օգտագործվել լիբանանյան կողմի վրա ճնշում գործադրելու համար: ԱՄՆ սերտ կապերը Ծոցի մի շարք երկրների եւ Եգիպտոսի հետ, փաստորեն, անգոր եղան թե՛ «Յիզբալլահի» հետ պայմանավորվածությունների ձեռքբերման եւ թե՛ այս կազմակերպության ֆինանսավորումը եւ արտաքին աջակցությունը դադարեցնելու համար: Իրանն այսօր, փաստորեն, այն միակ պետությունն է, որը կարող է անմիջականորեն ազդել Լիբանանում ընթացող գործընթացների վրա: Այս իրողությունը վաղ թե ուշ կստիպի միջազգային հանրությանը, այդ թվում եւ ԱՄՆ-ին, բանակցություններ սկսել Իրանի հետ, եթե, իհարկե, ամերիկա-իսրայելական տարածաշրջանային քաղաքականության եզրաքարը լինի ոչ թե «կառավարվող քառսի», այլ «կառավարվող խաղաղության» քաղաքական գիծը<sup>2</sup>:

### **Ձեռքբերումներ միջուկային ծրագրի հիմնախնդրում**

Պատերազմի ընթացքում եւ դրանից հետո Իրանը նշանակալիորեն ամրապնդեց սեփական դիրքերը միջուկային հիմնախնդրի շուրջ ընթացող բանակցություններում, ինչպես նաեւ կարելու գիտատեխնիկական քայլ կատարեց իր միջուկային ծրագրի զարգացման ուղղությամբ.

1. Միջուկային ծրագրի շուրջ վերջին բանակցությունները հաջողությամբ չավարտվեցին: Սակայն ամերիկյան եւ եվրոպական արձագանքը Իրանի դիրքորոշման կարծրացմանը ավելի մեղմ էր, քան

<sup>2</sup> Ըստ որոշակի տեղեկատվության, վերջին երկու ամիսների ընթացքում Գերմանիայի, Շվեյցարիայի եւ Ավստրիայի տարածքներում կազմակերպվել են 5 իրանա-իսրայելական միջպետական գաղտնի բանակցություններ: Դրանց ընթացքում հիմնականում քննարկվել է մեկ հարց. կոնֆլիկտի վերացման համար Իրանն «աշխատում» է «Յիզբալլահի» հետ, իսկ Իսրայելը՝ ԱՄՆ իր համայնքի հետ, որը պետք է ամերիկյան ղեկավարությանը «տեղեկացնի», որ Իրանի հետ պատերազմը Իսրայելի համար անընդունելի եւ վտանգավոր է:

սպասվում էր: Սա հիմնականում պայմանավորված էր Իսրայելի հետ կոնֆլիկտում «Հիզբալլահի»՝ որպես Իրանի «ասիմետրիկ զինատեսակի» հաջողությամբ: Միեւնույն ժամանակ, իրանամետ եւ ազգությամբ պարսիկ իրաքյան ծայրահեղական այաթոլլա Մ. Աս-Սադրի կողմից Բաղդադում կազմակերպված՝ Լիբանանի պաշտպանությանն ուղղված հանրահավաքին մասնակցեց ավելի քան 400 000 մարդ: Ինչպես նշեց ամերիկյան փորձագետներից մեկը՝ «հարկավոր էր Սադրի մեկ կոչը, եւ այս ամբոխը մեկ օրում Բաղդադը կմաքրեր ամերիկացիներից»: Իրանական այս երկրորդ «ասիմետրիկ զինատեսակը» նույնպես մատնանշեց միջազգային հանրությանը, թե ինչ ուժով կարող է բախվել Իրանը ԱՄՆ-ին եւ նրա դաշնակիցներին, եթե միջուկային հիմնախնդրի շուրջ բանակցություններն ավարտվեն Իրանի դեմ ռազմական ակցիա իրականացնելու հնարավորության քննարկումներով:

2. Օգոստոսի վերջին Իրանը հրաժարվեց ընդունել միջազգային հանրության առաջարկն ուրանի հարստացման կասեցման մասին: Միեւնույն ժամանակ, ՄԱԿ ԱԽ անդամները եւ Գերմանիան որոշեցին հետաձգել Իրանի դեմ պատժամիջոցների կիրառման հարցի քննարկումը: Այս որոշումը պայմանավորված է ոչ այնքան Ռուսաստանի եւ Չինաստանի մոտեցումներով, որքան այն իրողությամբ, որն առաջ է եկել մերձավորարեւելյան հակամարտությունից հետո: Պատերազմը եւ Իրանի դիրքորոշման էլ ավելի կարծրացումը, փաստորեն, փակուղի են մտցրել միջազգային հանրությանը, որից դուրս գալը լինելու է ԱՄՆ-ի եւ Արեւմուտքի իրանական քաղաքականության հիմնական խնդիրը գալիք ամիսների ընթացքում:

3. Օգոստոսին Իրանը բացեց «ծանր ջրի» արտադրության ձեռնարկությունը, որը հնարավորություն կընձեռի Թեհրանին քայլ կատարել դեպի պլուտոնիումային միջուկային զենքի ստեղծումը:

### **Ձարգացումներն Իրանի ներքաղաքական կյանքում**

Իսրայելա-լիբանանյան պատերազմն իր ազդեցությունն ունեցավ եւ դեռ կունենա Իրանի ներքաղաքական կյանքում: Պատերազմն ամրապնդեց Իրանի ներկայիս նախագահ Մ.Ահմադինեժադի եւ Իսլամական հեղափոխության պահապանների բարձրագույն ղեկավարության դիրքերը երկրի ներքաղաքական դաշտում: Տուժեցին նախագահի գահընկեցության այն կողմնակիցների դիրքերը, որոնք պնդում էին, որ ծայրահեղականությունն արտաքին քաղաքակա-

նությունում կարող է կորուստներ բերել Իրանին: Իսրայելա-լիբանանյան պատերազմը եւ ԱՄՆ հայտարարությունների մեղմացումը մասնակիորեն վկայում են ծայրահեղական կուրսի արդյունավետության մասին: Այսպես կոչված «չափավոր» պահպանողականները սկսեցին հանդես գալ Մ.Ահմադինեժադի դեմ հիմնականում նրա հակա-իսրայելական հայտարարություններից հետո: Այս թելը իրանական ղեկավարությունում հիմնականում ներկայացված է մարդկանցով, որոնք, բացի քաղաքականից, վարում են նաեւ ակտիվ տնտեսական կյանք: Նրանց մեծ մասն այսպես թե այնպես կապված է նավթի նախարարության հետ, որի դիրքերի թուլացման հաջող քաղաքականություն է վարում Իրանի նախագահը՝ մանավանդ վերջին երկու ամիսների ընթացքում: Իրանում առկա «բենզինային ճգնաժամը», փաստորեն, մեծ հարված կհասցնի կոռուստացված իրանական նավթային կլաններին՝ զրկելով նրանց հսկայական եկամուտներից: Մեջլիսում տապալված բենզինի գների ազատականացման օրենքը մատնանշեց, որ նավթի նախարարությունն աստիճանաբար կորցնում է ազդեցության լծակները իրանական օրենսդիր մարմնում, իսկ դա նշանակում է, որ նվազել են նավթային կլանի՝ քաղաքական եւ հոգեւոր կառույցներում ունեցած լոբբիստների դիրքերը:

### **Զարգացումներ Իրան – ԱՄՆ հարաբերություններում**

Իսրայելա-լիբանանյան կոնֆլիկտից հետո ավելացել են իրանական կառավարությանը մոտ կանգնած փորձագետների հայտարարությունները եւ տեսակետներն այն մասին, որ արդեն իսկ եկել է ժամանակը, երբ ԱՄՆ-ը պետք է փորձ կատարի Իրանի հետ անմիջական երկխոսություն սկսելու ուղղությամբ: Այս տեսակետներն են արտահայտում հիմնականում Աբբաս Մալեքին, որը Իրանի հոգեւոր առաջնորդի եւ նախկին ԱԳՆ ղեկավար Ա.Ա. Վելայաթիի խորհրդականն է, ինչպես նաեւ Քավեհ Աֆրասիաբին, որն ապահովում է իրանական ղեկավարության տեսակետների տարածումն ամերիկյան փորձագետների շրջանում:

Իրանի նախկին նախագահ Մ.Խաթամիի եւ ԱՄՆ նախկին ղեկավար Ջ.Քարտերի հանդիպումը նույնպես կարող է վկայել ԱՄՆ – Իրան ուղղակի կապերի հաստատման մասին: Հարկ է նշել, որ ԱՄՆ կատարած այցի ժամանակ Խաթամիին ուղեկցում էր 2 տասնյակից ավելի մարդ, որոնց միայն մի մասն է Խաթամիի շրջապատի ներկայացուցիչ: Բացառված չէ, որ Խաթամիի պատվիրակության մեջ ընդգրկված են

եղել Իրանի ներկայիս ղեկավարության ներկայացուցիչները, որոնց ԱՄՆ այցելության հիմնական նպատակն է եղել ամերիկյան իշխանության ներկայացուցիչների կամ այդ իշխանություններին մոտ կանգնած անձանց հետ բանակցությունները:

Իրանի նախագահ Մ.Ահմադինեժադի հայտարարությունը ԱՄՆ ղեկավարի հետ հեռուստատեսային բանավեճ վարելու իր պատրաստակամության մասին կարող է որոշակի շրջանում վերափոխվել երկկողմանի պայմանավորվածության՝ բարձր մակարդակով հանդիպման կազմակերպման մասին: Դժվար թե այդ հանդիպումն անցնի նախագահների մակարդակով, սակայն ԱԳՆ ղեկավարների հանդիպման հնարավորությունը բավական մեծ է:

Անփոփելով վերը նշվածը՝ կարելի է ասել, որ իսրայելալիբանանյան պատերազմը մատնանշեց մի նոր փուլի սկիզբ, որում ավելի ամուր կլինեն իրանական դիրքերը եւ որում կմեծանա իրանա-ամերիկյան անմիջական կապերի հաստատման հնարավորությունը: Այս կապերի հեռանկարները հիմնականում կախված են ներամերիկյան զարգացումներից, ինչպես նաեւ նրանից, թե ԱՄՆ փոխնախագահ / պաշտպանության նախարար եւ ԿՀՎ / հին պահպանողականներ ներքին հակամարտությունում ուն մերձավորարեւելյան նախագիծը ամերիկյան քաղաքականության հիմք կընդունվի:

## **ՀԻՆ «ՆՈՐ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԸ»**

### **Սուրեն Սարյան**

Լիբանանում մոտ մեկ ամիս տեւած պատերազմը թեւեւ ուներ իր անմիջական դերակատարները՝ Իսրայել, «Հիզբալլահ», Իրան եւ Սիրիա, հիմնական խաղացողները, սակայն, Միացյալ Նահանգները եւ Եվրոպան են: Վերոնշյալ դերակատարներին եվրո-ամերիկյան այս խաղում վերապահված է սոսկ զինվորների գործառույթ:

ԱՄՆ-ին եւ Եվրոպային, կարծես թե, հաջողվել է գալ համաձայնության Մեծ Մերձավոր Արեւելքը վերստին բաժանելու հարցում: Այստեղ սկսեցին գործել նույն մեթոդներն ու ավանդույթները, որոնք առկա էին նախորդ դարի սկզբին, երբ 1916թ. անգլո-ֆրանսիական համաձայնագրով, որն ավելի հայտնի է որպես Սայքս-Պիկոյի համաձայնագիր, Լիբանանն ու Սիրիան անցան Եվրոպացիների (տվյալ դեպքում՝ ֆրանսիացիների) հսկողության տակ, իսկ Պաղեստինն ու Իրաքը մնացին անգլոսաքսերի հսկողության ներքո: Այսօր մենք վկա ենք մոտավորապես նույն ընթացքին: Ֆրանսիացիների եւ իտալացիների առաջնորդությամբ իրականացվում է խաղաղապահ զորքերի մուտքը Լիբանան, իսկ գերմանական եւ բրիտանական նավերը կվերահսկեն ծովափնյա շրջանները: Չորքերի ամրապնդվելուց հետո խաղը կուղղվի դեպի Սիրիա, որին կառաջարկվի Գոլանի բարձունքների վերադարձը՝ նույն Եվրոպական զորքերի մշտական ներկայությամբ:

Ձուգահեռաբար անգլոսաքսերն ու Եվրոպացիները լուծում են Սիրիան որպես աշխարհիկ պատվար պահելու, Միջերկրական ծովից Իրանին վերջնականապես կտրելու խնդիրները, առավել եւս, որ իսրայելական բանակը կատարեց իր վրա դրված առաքելությունը՝ էական վնաս պատճառելով «իրանական հատուկ նշանակության ջոկատներին», որոնք հայտնի են «Հիզբալլահ» անվամբ:

Այդ սցենարի իրագործումը սկսվեց 2005թ. մարտին Լիբանանի նախկին վարչապետ Հարիրիի սպանությունից հետո, երբ ԱՄՆ-ն ու Ֆրանսիան համատեղ ստիպեցին սիրիացիներին դուրս բերել իրենց զորքը Լիբանանից: Եվ ամենեւին էլ պատահական չէ, որ ՄԱԿ-ի, ավելի ճիշտ՝ ԵՄ-ի խաղաղապահ առաքելությունը գլխավորեց Ֆրանսիան, որ հենց ֆրանսիական զորքերը կկազմեն խաղաղապահների «ողնաշարը», քանզի Լիբանանը վաղուց համարվում է ֆրանսիական ազդեցության գոտի: Ֆրանսիայի համար ռազմական եւ քաղաքական մուտքը

Լիբանանն նշանավորում է համաշխարհային տերության իր կարգավիճակի վերադարձը: Ֆրանսիայի ներքին գործերի նախարար, հաջորդ նախագահի առավել ակնհայտ հավակնորդներից մեկը՝ Նիկոլա Սարկոզին, արդեն հայտարարել է, որ Ֆրանսիան չի կարող թույլ տալ, որ Լիբանանը վերածվի արմատական շիիզմի ֆորպոստի, որն ապակայունացնում է ամբողջ արաբական աշխարհը, եւ որ Ֆրանսիան ունի լիակատար իրավունք ազդելու տարածաշրջանի վրա, քանի որ այստեղից կախված է ֆրանսիացիների եւ եվրոպացիների անվտանգությունը:

Պատերազմը վերստին փաստեց, որ մահմեդական եւ արաբական աշխարհը միասնական երեւոյթ չէ: Արաբ սոււննիներն արդեն բավական երկար ժամանակ մտահոգված էին ամբողջ տարածաշրջանում իսլամի շիա ուղղության ազդեցության աճով: Իրաքը, Սիրիան եւ Լիբանանը կամաց-կամաց մտնում էին «շիական» գոտու մեջ: Որեւէ սոււննիական պետություն չաջակցեց «Չիզբալլահին», բացի Սիրիայից: «Չիզբալլահի» թուլացումը, ինչ-որ տեղ, բխում է արաբական պետությունների շահերից: Փաստորեն ոչ մի արաբական երկիր չարձագանքեց Ահմադինեժադի կոչերին՝ համատեղ ճակատով դուրս գալու «սիոնիստական հակառակորդի» դեմ եւ նույնիսկ չխզեց դիվանագիտական հարաբերությունները Իսրայելի հետ: Իսլամական աշխարհի եւ Իսրայելի միջեւ լայնածավալ պատերազմի մասին բոլոր խոսակցությունները հերթական անգամ հոդս ցնդեցին:

«Չիզբալլահի» թուլացումը ինքնաբերաբար կթուլացնի նրա գլխավոր հովանավոր Իրանի դիրքերը, իսկ Իրանը միշտ էլ համարվել է տարածաշրջանի առաջատար արաբական երկրների գլխավոր մրցակիցը՝ մահմեդական աշխարհում ազդեցության համար: «Չամասի» ու «Չիզբալլահին» արդեն արաբական ՁԼՄ-ը անվանում են «աննորմալ երեւոյթներ», որոնք վարկաբեկում են արաբական աշխարհը: Եգիպտոսի նախագահ Մուբարաքը հայտարարեց, որ «Չամասն» ու «Չիզբալլահը» իրենք սադրեցին Իսրայելին եւ մղեցին տարածաշրջանը դեպի ստրատեգիական աղետ, իսկ Սաուդյան Արաբիայում վահաբական շեյխերը «Չիզբալլահին» ուղղակի անվանեցին ոչ թե «Ալլահի կուսակցություն», այլ «սատանայի կուսակցություն»:

Մյուս կողմից, արաբական վարչակարգերը լրջորեն մտահոգված են սեփական ճակատագրով, քանի որ հենց «Չամասի» կամ «Չիզբալլահի» տիպի կազմակերպություններն են իրական այլընտրանք ստեղծում իրենց իշխանությանը, ուր էլ դա լինի՝ Եգիպտոսում, Սաուդյան Արաբիայում, Չորդանանում թե Թուրքիայում: Եղան անգամ տեղեկատվական արտահոսքեր, որ արաբական վարչակարգերը ոչ հրապարակավ իրենց աջակցությունն են հայտնել Իսրայելին:

Իր հերթին՝ Լիբանանը շանս է ստանում կայանալ որպես իրոք չեզոք եւ նորմալ պետություն: Զինադադարին կից տեւեն եվրոպացիների եւ ամերիկացիների կողմից լիբանանյան զինված ուժերի վարժեցումն ու զինումը՝ «Չիզբալլահին» հետզհետե զինաթափելու նպատակով, ապա խոշորածավալ տնտեսական օգնությունը Լիբանանին՝ տեղի բնակչության աջակցությունը «Չիզբալլահին» դեմ շահելու համար: Չպետք է մոռանալ, որ ժամանակին Լիբանանի բնակչության մեծամասնությունը կազմում էին քրիստոնյաները: Յենց «Չիզբալլահին» ջանքերով այսօր մեծամասնություն են դարձել շիա մահմեդականները: Ըստ երեւութի, Արեւմուտքի համար էական խնդիր է լինելու նորից կշեռքի մտարը թեքել դեպի քրիստոնյաները եւ նրանց դաշնակից դրուզներն ու չափավորական սուննիները՝ դրանով ստեղծելով արաբական աշխարհում մի հեռակետ, որտեղից հնարավոր կլինի իրականացնել արեւմտյան ծրագրերը տարածաշրջանում:

Մինչեւ վերջերս Լիբանանի կառավարությունը փաստորեն ի վիճակի չէր վերահսկել երկրի տարածքը եւ առանց միջազգային աջակցության զինաթափել «Չիզբալլահին»: Վերջինս ավելի իրական երեւութ է, քան լիբանանյան պետությունը, եւ հենց նրա հետ էր պայքարում Իսրայելը: Իսրայելական բանակն էլ պարզապես պայմաններ ստեղծեց «Չիզբալլահին» լիբանանյան կառավարական զորքերի եւ եվրոպական խաղաղապահների վերահսկողության տակ բերելու համար: Սակայն, որպեսզի այդ գործընթացը հաջողվի, նրա մեջ պետք է ներգրավվի Սիրիան:

Արեւմուտքն այժմ հետապնդելու է Սիրիային եւ Իրանին իրարից անջատելու խնդիրը: Սիրիան, որը հույս ուներ նորից մտնել Լիբանան՝ միջազգային ընկերակցության խնդրանքով «Չիզբալլահին» «զսպելու» եւ հակամարտությունը սառեցնելու համար, այդ նպատակին չհասավ, սակայն հնարավորություն է ստացել ինքնուրույն, թեհրանից անկախ խաղ սկսել ԱՄՆ-ի, Եվրոպայի եւ Իսրայելի հետ, որը բխելու է հենց սիրիական, այլ ոչ թե իրանական շահերից: Աշխարհաքաղաքական շահերը որոշ ժամանակ ի մի բերեցին Սիրիային եւ Իրանին՝ երկու չափազանց տարբեր երկրների, որոնք միավորված են Իսրայելին եւ ԱՄՆ-ին իրենց դիմակայության մեջ, եւ քանի դեռ Սիրիայի նախագահ Բաշար Ասադը չունի այլընտրանք, նա ստիպված է դաշնակցել Թեհրանի հետ: Սակայն եթե ԱՄՆ-ն ու Եվրոպան նրան առաջարկեն այդ այլընտրանքը, ապա իրանա-սիրիական դաշինքի մասին կարելի կլինի խոսել անցյալով: Իսկ ի՞նչը կարող է դրա համար լավագույն առիթ ծառայել, եթե ոչ Գոլանի բարձունքների վերադարձը եւ ասադյան աշխարհիկ վարչակարգի պահպանումը:

Բացի դրանից, «Չիզբալլահի» թուլացմամբ Սիրիան կորցնում է իր շահեկան դիրքերը եւ այժմ ստիպված է լինելու լուրջ քայլեր ձեռնարկել Իսրայելի հետ բանակցությունների սեղանին նստելու ուղղությամբ: Գոլանի բարձունքների զիջումն այն գինն է, որն Իսրայելը պետք է վճարի Սիրիայի հետ խաղաղության հաստատման դիմաց: Սիրիան, իր հերթին, եւս պետք է գնա որոշակի զիջումների իսրայելական ճակատում: Այդ դեպքում ինքնըստինքյան Դամասկոսը «կփակի» «Չիզբալլահի» հարցը: Սիրիան եւ Լիբանանը, որոնք աշխարհիկ երկրներ են, ապագայում կարող են դառնալ Իսրայելի համար բավական արդյունավետ գործընկերներ:

«Չիզբալլահի» դիրքերը Լիբանանում էապես թուլացած են: «Չիզբալլահն» այնպիսի կորուստներ կրեց, որ արագորեն չի կարողանալու վերականգնվել: «Չիզբալլահի» ջոկատները դուրս են մղվել իսրայելա-լիբանանյան սահմանային գոտուց, որտեղ նրանք տեղակայված էին վերջին քսան տարիների ընթացքում: «Չիզբալլահը» փաստորեն կորցրեց Իսրայելի դեմ Լիբանանի սահմանի «պահապանի» դերը: Այն այլեւս չունի այնքան ֆինանսական եւ սոցիալական ռեսուրսներ, որպեսզի օգնի անօթեւան մնացած կես միլիոնից ավելի լիբանանցիներին՝ վերակառուցելու իրենց կյանքը. մինչդեռ մինչեւ պատերազմը «Չիզբալլահը» իր համաժողովրդական աջակցությունը ձեռք էր բերում հենց իր կողմից իրագործվող սոցիալական եւ բժշկական օգնության ծրագրերի շնորհիվ: Եթե նույնիսկ շարունակի գործել կապը Իրանի հետ, ապա «Ալլահի կուսակցությունը» հաստատ ռեսուրսներ չի ունենա նախկին հզորությունը վերականգնելու համար, իսկ հին բազան արդեն ոչնչացված է իսրայելական բանակի եւ օդուժի կողմից՝ ներառյալ գործարանները, հիմնարկները, զինապահեստները, որոնց ֆինանսավորման համար տարեկան Իրանից հատկացվում էր մոտ 100 մլն դոլար. մինչդեռ Լիբանանին պատերազմի հետեւանքով հասցված է մոտ 5 մլրդ դոլարի վնաս: Սոցիալական օգնության գործառնությունը կստանձնեն ԵՄ-ը եւ Սաուդյան Արաբիան, որը երբեք խնդիրներ չի ունեցել Իսրայելի հետ:

«Չիզբալլահին» միայն թույլ տվեցին տանել քարոզչական հաղթանակ, քանի որ այն անհրաժեշտ էր Եվրոպային որպես խաղաթուղթ՝ Միացյալ Նահանգների հետ Մերձավոր Արեւելքը կիսելու առեւտրում:

Ըստ էության, այս դիմակայությունից քաղաքական կորուստներով դուրս եկավ նաեւ Իրանը, որը գրկվում է դեպի Միջերկրական ծովի ավազան ելքից, այնտեղի իր պատվարից: Բացի դրանից, խաղաղապահ գործերի վերաբերյալ ընդունվեց որոշում, որը համընկնում է ավելի շուտ Իսրայելի նպատակների հետ եւ հակասում Իրանի շահերին:

Թեհրանը կտրականապես դեմ էր Լիբանանում այսօրվա լիազորություններով եւ կազմով միջազգային խաղաղապահ ուժերի հայտնվելուն: Խաղաղապահ զորախումբը պետք է փաստորեն օգնի լիբանանյան բանակին՝ իր վերահսկողության տակ վերցնել ամբողջ հարավային Լիբանանը. այն ունի իրական լիազորություններ եւ գտնվում է նրա գործողությունների համար պատասխանատվություն կրող խոշոր պետության՝ Ֆրանսիայի հրամանատարության ներքո:

Ըստ էության, Լիբանանի եւ Սիրիայի ներգրավումը ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ ամբողջ Արեւմուտքի հետ հարաբերությունների ուղեծրում կլինի այս պատերազմի գլխավոր քաղաքական արդյունքը: Փաստորեն, իսրայելական բանակի շնորհիվ ԱՄՆ-ին եւ ԵՄ-ին հաջողվեց ստեղծել Լիբանանում եւ տարածաշրջանում նոր ստատուս քվո եւ հեռանալ հնից, որը թույլ էր տալիս Իրանին, Սիրիային եւ «Յիզբալլահին» վարել սեփական խաղը:

Բացի այդ, քանի որ Իսրայելի եւ «Յիզբալլահի» գործողությունների հետեւանքով հնարավորություն ստեղծվեց Սիրիային պոկել Իրանի հետ դաշինքից եւ վերադարձնել նրան սուննիական արաբական երկրների կոալիցիա՝ Եգիպտոսի, Յորդանանի, Սաուդյան Արաբիայի հետ միասին, ապա կարելի է չկասկածել, որ վերջիններս ամեն ինչ կանեն Սիրիային հետ բերելու եւ դրանով փակելու Իրանի ճանապարհը՝ տարածաշրջանում առաջնորդի դեր կատարելու համար:

Արեւմուտքի առջեւ դրված է եւս երկու գերհարցի լուծում. Թուրքիայի եւ Իրանի ապագան: Թուրքիան անցնում է Եվրոպայի հովանավորության տակ, առավել եւս, որ Անկարան սկսում է հակամեծիկյան ջղաձիգ շարժումներ անել: ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության ընթացքը հենց Եվրոպական խաղի սցենարն է: ԵՄ-ը ստանում է թռիչքադաշտ դեպի Մեծ Մերձավոր Արեւելքի բնական պաշարներ եւ նոր պատվար՝ Եվրոպան արաբական եւ իրանական անցանկալի ազդեցություններից պաշտպանելու համար: Հենց այդ պատճառով թուրքական զորքերը մտնում են նախկին օսմանյան նահանգ Լիբանան՝ ԵՄ-ի զորքերի ենթակայության տակ:

Սակայն, որպեսզի Եվրոպացիների ձեռքում Թուրքիան չափազանց ուժեղ գործոն չդառնա, անգլոսաքսերը մշտապես պատրաստ են պահում քրդական խաղաքարտը: Թուրքիան էլ, լավ հասկանալով, որ այլեւս Մեծ Մերձավոր Արեւելքում որպես «պաշարված ամրոց» մնալու իր ռեսուրսները սպառվել են, գալիք մեծ վերաբաժանումների գոհ չդառնալու համար ունի փրկության միայն մեկ ելք՝ սրընթաց վազել դեպի ԵՄ:

Իրանի պարագան մի փոքր այլ է: Արեւմտյան քաղաքակրթությունը խնդիր ունի կոտրել իրանական պետական (ազգայնական-կրոնական)

մտածողությունը: Միեւնույն ժամանակ, Իրանի մեջ Արեւմուտքը տեսնում է ամբողջ տարածաշրջանում իր քաղաքականությանը եւ քաղաքակրթական արժեքներին առավել մոտ կանգնած երկրի, որը պետք է հակակշռի արաբական աշխարհին, քրդերի եւ ազերիների բարձրացող էթնոսներին՝ նրանց չափազանց մեծ հզորացումը խափանելու եւ տարածաշրջանում այլ համաշխարհային դերակատարների (Չինաստան, Ռուսաստան, ՅՆԿԱՍՏԱՆ) հաստատումը խոչընդոտելու համար: Այս իրավիճակում Արեւմուտքի համար անգամ ընդունելի կարող է լինել Իրանի միջուկային տերության կարգավիճակը, եթե ընդունելի լինի նրա վարչակարգը կամ քաղաքականությունը:

Իսկ եթե այդ նպատակին չհաջողվի հասնել, ապա ռազմական բախումը դառնում է առավել հավանական ելք: Պատերազմն Իրանի դեմ, հավանաբար, կարող է տեղի ունենալ 2007-2008թթ. ընթացքում՝ նախագահ Ջ.Բուշի հեռացումից մի քանի ամիս առաջ: Թեպետեւ պատերազմն ունի այլընտրանք, եթե Իրանը հայտնվի ԱՄՆ-ի եւ Եվրոպայի քաղաքական եւ ռազմական ուժեղ ճնշման տակ, ինչը դառնում է օրակարգային Լիբանանում, Սիրիայում, Իրաքում, Աֆղանստանում եւ Հարավային Կովկասում Արեւմուտքի ռազմական հաստատումից հետո: Ավելին, նման ճնշման տակ Իրանի խաղաղ ընկրկումը կարող է ավելի մեծ արդյունք տալ, քան պատերազմի միջոցով նրան ծնկի բերելը:

Ինչպես նշում է Հենրի Քիսինջերը, եթե Թեհրանը շարունակի համառորեն տանել պարսկական կայսերական ավանդույթի եւ ժամանակակից իսլամական եռանդի համադրության գիծը, ապա բախումն Ամերիկայի եւ մնացած աշխարհի հետ անխուսափելի կլինի: Ուստի, չի կարելի թույլ տալ Իրանին իրականացնել իր երազանքը աշխարհի համար այնքան կարելու տարածաշրջանում կայսերական կառավարման մասին: Ընդ որում, Քիսինջերն առաջարկում է գնալ ոչ թե վարչակարգի փոփոխության նպատակի հետեւից, այլ փոխել Իրանի քաղաքականության կուրսը՝ անկախ նրանից, թե այնտեղ ով է գտնվում իշխանության ղեկին:

Այս ամենը հատկապես հետաքրքիր է նրանով, որ ներկայումս տեղի է ունենում Միացյալ Նահանգների ռազմավարության էական փոփոխություն. ամերիկացիները որդեգրում են այն գաղափարը, որ իրենք համաշխարհային կայսրություն կառուցելու փոխարեն պետք է դառնան աշխարհում գերիշխող տերություն, որը պետք է ուժեղ դաշնակիցներ ունենա՝ աշխարհի կառավարումն իրականացնելու համար: Դա մոտավորապես այն մոդելն է, որով ընթացել են Հռոմեական եւ Բյուզանդական կայսրությունները, որոնք ժամանակին հրաժարվեցին

ամենուրեք իրենց տիրապետությունը հաստատելու գաղափարից եւ անցում կատարեցին դեպի «դաշնակից եւ բարեկամ» թագավորների հետ ցանցային համակարգի ստեղծումը: Իսկ ներկա պահին Միացյալ Նահանգները չունի որեւէ այլ վստահելի, թեպետեւ չափազանց ինքնուրույն դաշնակից, քան Եվրոպան:

Այսօր ԱՄՆ-ն ու Եվրոպան գնում են Մեծ Մերձավոր Արեւելքում իրենց համատեղ պրոտեկտորատի հաստատմանը: Լիբանանյան պատերազմը Եվրոպային տարածաշրջանում խաղաղարար առաքելություն սկսելու լեզիտիմ իրավունք տվեց:

Այսպիսով, «Նոր Մերձավոր Արեւելքի» հայեցակարգը, որի մասին սկսեցին խոսել լիբանանյան պատերազմի ժամանակ, ըստ էության, լավ մոռացված հիմն է. այն առնվազն այնքան տարեկան է, որքան Առաջին աշխարհամարտը, երբ տարածաշրջանը, Օսմանյան կայսրության վերացմանը զուգահեռ, բաժանվեց արեւմտյան տերությունների կողմից: Հենց այդ ժամանակ գծվեցին Մեծ Մերձավոր Արեւելքում պետությունների սահմանները, եւ այսօր այդ գործընթացը շարունակվում է:

Այսպես, օրինակ, Իրաքի միասնությունն այսօր պահպանվում է զուտ ձեւականորեն: Որոշ հեղինակավոր ամերիկյան դիվանագետներ, ինչպես, ասենք, Ռիչարդ Յոլբրուքը, կոչ են անում տեղափոխել ամերիկյան զորքերը հյուսիսային Իրաք, որտեղ նրանք կփակեն Թուրքիայի մուտքը մի տարածք, որտեղ բնակվող քրդերը ձգտում են անկախության: Այսինքն՝ ամերիկացիները նախապատրաստվում են իրաքյան Քրդստանը դարձնել իրենց ռազմական եւ քաղաքական հենարանը՝ ամբողջ տարածաշրջանը կառավարելու համար: Գերազանցապես շիաներով բնակեցված հարավային Իրաքը կարող է փոխանցվել Իրանին՝ որպես փոխհատուցում կամ վճարում քաղաքականության, անգամ՝ վարչակարգի փոփոխության դիմաց: Կենտրոնական մասում կհաստատվի սաուդյան կամ սիրիական ազդեցություն:

Այսինքն՝ իրականություն կդառնա տարածաշրջանի այն քարտեզը, որն առաջարկվում էր դեռեւս 90 տարի առաջ՝ Օսմանյան կայսրությունից արաբների անկախացումը գլխավորող բրիտանացի հռչակավոր հետախույզ Թոմաս Լոուրենս Արաբացու կողմից: Ի դեպ, վերջերս ամերիկյան «Armed Forces» ամսագրում հրապարակված Մեծ Մերձավոր Արեւելքի վերաբաժանման՝ այդքան աղմուկ հանած «նոր» քարտեզն իրականում նոր չէ, այլ կրկնում է Լոուրենսի քարտեզի ուրվագծերը:

**ՄԵՐՃԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ  
ՆՈՐ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ  
Գագիկ Տեր-Չարությունյան**

**ԱՄՆ ռազմավարությունը.** Մերձավոր եւ Միջին Արեւելքում (ՄՄԱ) տիրող ներկայիս իրավիճակը պայմանավորված է 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո ծայր առած «հակաահաբեկչական պատերազմով» եւ որպես դրա հետեւանք՝ Աֆղանստանի եւ Իրաքի հանդեպ իրականացված գործողություններով: Համաձայն ԱՄՆ ներկա քաղաքականությունն իրականացնող նեոկոնսերվատորների տեսլականի, ամերիկյան էքսպանսիան պետք է վերափոխեր ՄՄԱ-ի եւ Կենտրոնական Ասիայի գաղափարախոսական, ռազմաքաղաքական եւ տնտեսական բովանդակությունը, հանգեցներ նոր էթնիկական-պետական միավորների առաջացմանը: Նման ծրագրերը, մասնավորապես ՄՄԱ-ում, հետապնդում էին հետեւյալ նպատակները.

❖ Նվաճել ԱՄՆ-ի համար շահեկան դիրքեր Եվրասիայում եւ այդպիսով աշխարհաքաղաքական առավելության հասնել Չինաստանի եւ Ռուսաստանի հանդեպ (Իրանի վարչակարգի փոփոխումը ենթադրվում էր լուծել ընթացքից, գործողությունների առաջին փուլում, ռազմական ներխուժման համար որպես պլացդարմ օգտագործելով Իրաքը):

❖ ՄՄԱ-ի էներգետիկ ռեսուրսների վրա ուժային վերահսկողություն սահմանելով՝ ապահովել սեփական էներգետիկ անվտանգությունը եւ աշխարհատնտեսական լծակներ ձեռք բերել էներգառեսուրսներով ոչ հարուստ Չինաստանի, Հնդկաստանի, ինչպես նաեւ Եվրոպայի եւ ճապոնիայի հանդեպ:

❖ Ապահովել Իսրայելի անվտանգությունը, վերահսկողության տակ առնել տարածաշրջանի ռազմաքաղաքական արժեք ներկայացնող երկրները՝ Իրաքը, Իրանը, Սիրիան, Լիբիան, իսկ ապագայում նաեւ Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը:

❖ Փոխելով ՄՄԱ երկրների վարչակարգերը՝ տարածաշրջանում ներդնել ամերիկյան պատկերացումներին համապատասխան ժողովրդավարական համակարգ, որը կապահովեր ձեռքբերումների հարատեւությունը:

Պետք է ընդունել, որ ԱՄՆ-ը կարողացավ լուծել ՄՍԱ-ում իր առջև դրված խնդիրների մի մասը. Իրաքը փաստացի բաժանվել է մասերի<sup>1</sup>, Լիբիայի ղեկավարությունը, խուսափելով հնարավոր զարգացումներից, գերադասեց փոխել կողմնորոշումները եւ ըստ էության դուրս եկավ արմատական իսլամի երկրների շարքից, Սիրիան ստիպված էր լքել դիրքերը Լիբանանում: Միեւնույն ժամանակ, կարելի է արձանագրել, որ ԱՄՆ գործող ռազմավարական ծրագրերն ինչ-որ չափով թերի են եւ դրանցում ճշգրիտ չեն հաշվարկվել, մասնավորապես, հետեւյալ գործոնները.

❖ Գլոբալ հարթությունում ԱՄՆ գործողություններն ընկալվեցին որպես բացարձակ միաբեւեռ աշխարհակարգի հաստատման ձգտում: Դա առաջացրեց մնացյալ աշխարհի դիմադրությունը եւ արտահայտվեց Չինաստանի, Ռուսաստանի, Եվրոպայի ու Հարավային Ամերիկայի որոշ երկրների՝ ԱՄՆ մենատիրական հավակնությունների դեմ ուղղված քայլերով. նախնական փուլում այդ երկրների գործողություններն անկանոն էին, սակայն հետզհետե ընդունեցին ավելի համակարգված բնույթ:

❖ Իրանի էվոլյուցիան ռազմաքաղաքական, տնտեսական եւ տեղեկատվական ոլորտներում փոխեց ուժերի հարաբերակցությունը եւ, հետեւաբար, իրավիճակը ՄՍԱ տարածաշրջանում: Ներկայումս Իրանն էական դերակատարում է ձեռք բերել ՄՍԱ երկրների (հատկապես Իրաքի, Սիրիայի եւ Լիբանանի) քաղաքական անցուղարձում եւ այսօր, որպես տարածաշրջանի առաջատար, խորհրդանշում է իսլամական աշխարհի դիմադրությունը ԱՄՆ-ի եւ Իսրայելի դեմ: Հատկանշական է, որ Իրանի միջուկային ծրագրի շուրջ ընթացող զարգացումները հանգեցրին ոչ թե այդ երկրի մեկուսացմանը (ինչպես դա ենթադրվում էր), այլ որոշակիորեն նպաստեցին Ռուսաստանի, Չինաստանի եւ մասամբ Ֆրանսիայի ու Գերմանիայի համախմբմանը:

<sup>1</sup> Նկատենք, որ Իրաքում ստեղծված քաոսային իրավիճակը կարելի է երկակի գնահատել: Այդ երկրի տարածքը, իրոք, չի վերահսկվում ամերիկյան զինուժի կողմից, ինչը ԱՄՆ ռազմաքաղաքական անհաջողության վերաբերյալ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Սակայն եթե իրադրությունը դիտարկենք Իրաքի մասնատման եւ ստեղծված անկայունությունը տարածաշրջանի այլ երկրներ տեղափոխելու տեսանկյունից (ինչը կարող է հող նախապատրաստել, որպեսզի դրանք նույնպես դրվեն ամերիկյան վերահսկողության տակ), ապա չի կարելի բացառել, թե ամերիկացիները՝ ելնելով այսպես կոչված *ղեկավարելի քաոսի* հայեցակարգի տրամաբանությունից, նման եղանակով փորձում են լուծել իրենց առջև դրված խնդիրները:

Վերոհիշյալ հանգամանքների արդյունքում ՄՄԱ-ում ձեւավորվել է մի իրադրություն, երբ ԱՄՆ եւ Իսրայելի համատեղ ծրագրերն անավարտ են մնացել, իսկ նրանց դիրքերը գլոբալ եւ տարածաշրջանային հարթություններում թուլացման միտում ունեն: Նման իրավիճակում որոշ վերլուծաբաններ կանխատեսում էին տարածաշրջանում պատերազմական գործողություններ՝ նկատի ունենալով ԱՄՆ-Իրան առճակատում: Սակայն ներկա փուլում Միացյալ Նահանգները չդիմեց Իրանի դեմ ուղղակի ռազմական գործողությունների, այլ նպատակահարմար գտավ Իսրայելի միջոցով ձեռնարկել *«հաղթական փոքր պատերազմ»*: Դա թույլ կտար ԱՄՆ-ին կասեցնել իր համար բացասական տարածաշրջանային միտումները, բարելավել «գերտերության» երերացող իմիջը միջազգային հանրությունում, ինչպես նաեւ բարձրացնել հանրապետական վարչակազմի վարկը ներքին քաղաքական դաշտում:

Կարճատեւ ռազմական գործողությունը, սակայն, փաստորեն վերածվեց լայնամասշտաբ պատերազմի, որին լիիրավ մասնակցություն ունեցան Իսրայելը, ԱՄՆ-ը եւ ի դեմս *«Հիզբալլահի»*՝ Իրանն ու մասամբ Սիրիան:

**Պատերազմը եւ ԱՄՆ-ը.** Մի շարք աղբյուրներ վկայում են, որ պատերազմական գործողությունները հրահրել էր ԱՄՆ-ը: Համաձայն ամերիկյան հեղինակավոր լրագրող Սեյմուր Յերշի՝ հարձակումը Լիբանանի վրա պլանավորվել էր մինչեւ հուլիսի 12-ը, երբ *«Հիզբալլահը»* գերեվարեց իսրայելական երկու զինվորների: Լիբանանի վրա հարձակումը եւ *«Հիզբալլահի»* հենակետերն ու ռազմական ենթակառուցվածքը օդային-հրթիռային հարվածներով ոչնչացնելը, ըստ Ս. Յերշի, Իրանի դեմ մշակված ընդհանուր պլանի մի մասն էին: Ենթադրվում էր նաեւ, որ պատերազմական գործողությունները պետք է ավարտվեին ոչ ավելի, քան 7 օրում, այսինքն՝ ամերիկյան պատկերացումներով դա, իրոք, պետք է լիներ *«հաղթական փոքր պատերազմ»*:

Միեւնույն ժամանակ, համաձայն *«Հիզբալլահի»* ղեկավարներից Նաիմ Քասսեմի հայտնած տեղեկության՝ Իսրայելը պատրաստվում էր հարվածել սեպտեմբերին, սակայն ԱՄՆ վարչակազմի ճնշման ներքո *ՑԱԽԱԼ-ը* ակտիվ գործողություններ սկսեց 2 ամիս շուտ: Այդ տեղեկատվությունը վկայում է այն մասին, որ պատերազմի սկիզբը, թերեւս, համընկեցվել էր հուլիսի 15-17-ը Սանկտ Պետերբուրգում կայացած «ութնյակի» գագաթաժողովի հետ: Նման վարկածի օգտին է խոսում նաեւ այն, որ գագաթաժողովների ընթացքում ահաբեկչական սպառնալիքի շեշտումը եւ այդպիսով ԱՄՆ ներկայիս վարչակազմի հակաահաբեկչական

ռազմավարության հիմնավորումն ու լեզվատիմացունը դարձել են յուրօրինակ ավանդույթ. հիշենք, որ նախորդ տարի Էդինբուրգում կայացած գագաթաժողովի ժամանակ կատարվեց ահաբեկչությունների շարք Լոնդոնում, ինչը նույնպես կարելի է մեկնաբանել դիվանագիտական-տեղեկատվական գործողությունների համատեքստում: Նկատենք նաև, որ արդեն պատերազմի ընթացքում ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան ձեռնարկեցին երկրորդ լայնածավալ «տեղեկատվական» գործողությունը՝ բացահայտելով պակիստանցի «օդային ահաբեկիչների ցանցը»:

Ելնելով վերոհիշյալից՝ ամերիկյան մոտեցումները ՄՄԱ զարգացումների կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ.

1. Գլոբալ հարթությունում հաղթական պատերազմը ԱՄՆ-ին անհրաժեշտ էր, որպեսզի վերականգնի իր երեքսոսոցիալ քաղաքական դիրքերը համաշխարհային հանրությունում եւ մասնավորապես՝ «մեծ ութնյակի» ձեւաչափում: Տեղեկատվական հարթությունում այդ պատերազմը նախագծվել էր որպես «հաղթական եւ կարճատեւ»:

2. ՄՄԱ տարածաշրջանում այդ «հաղթական եւ կարճատեւ» պատերազմը բխում էր ԱՄՆ-Իրան աշխարհաքաղաքական եւ աշխարհագրափարախոսական հակամարտության տրամաբանությունից: Իսրայել-«Հիզբալլահ» այս հակամարտությունն անհրաժեշտ էր ԱՄՆ զինված ուժերի ղեկավարությանը՝ որպես մարտական փորձ Իրանի դեմ հնարավոր լայնածավալ ռազմական գործողությունների համատեքստում:

3. «Հաղթական պատերազմը» հրատապ նշանակություն ուներ Վաշինգտոնի հանրապետական վարչակազմի համար՝ հաշվի առնելով նոյեմբերին կայանալիք Կոնգրեսի ընտրությունները եւ այդ համատեքստում նախագահ Բուշի ցածր վարկանիշը:

**Պատերազմի հետեւանքները ԱՄՆ-ի համար.** Կարելի է արձանագրել, որ պատերազմի հետ կապված ամերիկյան ծրագրերն իրականացվեցին միայն մասամբ. ռազմական գործողությունները տեւեցին ամսից ավելի, եւ դրանք դժվար է որակել որպես «հաղթական»: Արդյունքում՝ ԱՄՆ դիրքերը տուժեցին եւ տարածաշրջանային, եւ գլոբալ հարթություններում: Մասնավորապես, Իրանի միջուկային ծրագրի խնդրում Իրանը կարծրացրեց դիրքորոշումը, իսկ եվրոպական երկրների մոտեցումները մեղմվեցին եւ դարձան ավելի ճկուն, լրացուցիչ հիմնավորումներ ստացան Ռուսաստանը եւ Չինաստանը: Հնարավոր է, որ հետեւելով Իրանի օրինակին՝ սեփական միջուկային

ծրագրերի վերաբերյալ սկսեցին ավելի ակտիվ արտահայտվել Զարավաճաբանության Զանրապետությունը եւ Արգենտինան:

Զգալիորեն տուժեց նաեւ հանրապետական վարչակազմի իմիջը. համաձայն *American research Group-ի*՝ սեպտեմբերին Բուշի վարկանիշը հասել է պատմական նվազագույնի. ԱՄՆ քաղաքացիների ընդամենը 35%-ն է համարում, որ Բուշը կարողանում է կատարել իր պարտականությունները: Վարչակազմի ընդդիմադիրները ստացան լրացուցիչ հիմնավորումներ՝ քննադատելու համար ընթացիկ քաղաքականությունը, ինչը կարող է նպաստել ապագա ընտրություններում հանրապետականների անհաջողությանը:

Որպես դրական արդյունք ԱՄՆ-ի համար պետք է գրանցել այն մարտական փորձը, որը ձեռք բերվեց «*Հիզբալլահի*» հետ հակամարտությունում. ներկայումս ամերիկյան ռազմական փորձագետները վերլուծում են *SULUL-ի* ռազմական գործողությունների արդյունավետությունը, ինչն ապագայում թույլ կտա խուսափել կատարված սխալներից:

**Իսրայել.** Այս երկրի մարտավարական խնդիրն էր Պաղեստինում իշխանության եկած «*Համասի*» կազմալուծումը եւ «*Հիզբալլահի*» ռազմական ենթակառուցվածքի՝ հատկապես հրթիռային կրակակետերի ոչնչացումը: Տեղեկատվական-հոգեբանական հարթությունում ենթադրվում էր կարճատեւ «հաղթական պատերազմ», որը պետք է ամրապնդեր Իսրայելի տարածաշրջանային «գերտերության» իմիջը եւ բարելավեր վարչապետ Օլմերտի դիրքերը ներքին քաղաքական դաշտում: Միաժամանակ, Իսրայելի իշխանությունները նախատեսում էին այս գործողություններով առավելագույնս պառակտել Լիբանանի շիա եւ սուննի համայնքները:

«*Համասի*» դեմ գործողությունները կրում էին պատժիչ բնույթ, եւ իսրայելցիներին հաջողվեց հասնել իրենց նպատակներին: Սակայն «*Հիզբալլահի*» պարագայում նրանք լուրջ դիմադրության հանդիպեցին եւ միայն մասամբ լուծեցին խնդիրները. բավական է նշել, որ Իսրայելը հրթիռակոծվում էր մինչ զինադադարի վերջին օրը, իսկ նրա մոտ 1 միլիոն քաղաքացիներ ստիպված լքել էին իրենց բնակության վայրերը կամ օրերով թաքնվում էին ռմբապաստարաններում: Իսրայելի տնտեսությունն ընդհանուր առմամբ կրեց \$2.6 մլրդ-ի վնաս: Չլուծվեց նաեւ պատերազմի ռազմավարական խնդիրը. արդյունքում՝ սուննի-շիա հարաբերությունները ոչ թե սրվեցին, այլ լիբանանցիները համախմբվեցին «*Հիզբալլահի*» շուրջ: Բնորոշ է, որ ընդհանուր առմամբ նկատելիորեն նվազեցին նաեւ արաբական աշխարհում իշխող հակասությունները: Պատերազմի

հետեւանքով զգալիորեն խաթարվեցին Իսրայելի դիրքերը միջազգային հանրությունում. բավական է նշել, որ Գերմանիան, Իտալիան եւ Մեծ Բրիտանիան արգելել են *EI AI* ավիաընկերությանը, որը ԱՄՆ-ից բեռներ է տեղափոխում *ՑԱԽԱԼ-ի* համար, լցակայանան նպատակով օգտագործել իրենց օդանավակայանները:

Ռազմական հարաբերական անհաջողությունների արդյունքում Իսրայելի հանրությունում ծայր առավ ներքաղաքական ճգնաժամ, որի հետեւանքով մեծապես տուժել է Իսրայել պետության իմիջը. կարելի է փաստել, որ տեղեկատվական-հոգեբանական ոլորտում Իսրայելի կրած պարտությունն ավելին է, քան ռազմական անհաջողությունները:

Միեւնույն ժամանակ, պատերազմի քաղաքական-դիվանագիտական արդյունքներն իսրայելցիների համար դժվար է անբարենպաստ համարել. խաղաղապահ ուժերի տեղակայումը սահմանափակում է «*Հիզբալլահի*» հնարավորությունները եւ համապատասխանաբար բարձրացնում Իսրայելի անվտանգության աստիճանը:

**Իրան.** Ինչպես նշեցինք վերեւում, ԱՄՆ-ի եւ Իսրայելի համար պատերազմի հիմնական թիրախը Իրանն էր՝ իր հարաճող հավակնություններով: Հատկանշական է, որ ընդհանուր լրահոսից ձեւավորվում է տպավորություն, թե պատերազմական գործողությունների ծավալումը նպաստավոր էր նաեւ Իրանի համար: Հաշվի առնելով միջուկային ծրագրի շուրջ ընթացող զարգացումները եւ ամերիկյան հայտնի հարձակողական պլանները, հնարավոր զարգացումների էպիկենտրոնի տեղափոխումը Իրանից Լիբանան եւ Պաղեստին ձեռնտու պետք է լիներ Իրանին: Այսինքն՝ այդ տերությունը, Հարավային Լիբանանում ձեւավորելով «*Հիզբալլահի*» լավ նախապատրաստված ցանցային, ճյուղավորված կառույցը եւ կուտակելով այնտեղ զգալի ռազմական ռեսուրսներ, պետք է ձգտեր «տեղափոխել» հնարավոր իրադարձություններն իր սահմաններից հեռու եւ ապակայունացնել իրավիճակն այլ տարածքում: Այս առումով, Իրանը նվազագույնը դեմ չէր եւ պատրաստ էր, որպեսզի պատերազմական գործողություններ սկսվեն (զուցե եւ ոչ այն ծավալով, որ տեղի ունեցան): Միեւնույն ժամանակ, ռազմական հաջողությունը հոգեբանական-տեղեկատվական հարթությունում նույնքան անհրաժեշտ էր Իրանին, որքան ԱՄՆ-ին եւ Իսրայելին:

Պետք է ամրագրել, որ համատեղելով «*Հիզբալլահի*» ռազմաքաղաքական ներուժը, դիվանագիտական խուսանավումները եւ սպառնալիքները (նոր զինատեսակների ցուցադրություններով ընթացող զինավարժություններ, ի պատասխան ՄԱԿ-ի հնարավոր պատժամիջոց-

ներին՝ նավթի արտահանումը դադարեցնելու եւ այդպիսով բարելի գինը մինչեւ \$100-150-ի հասցնելու խոստումներ), Իրանը հասավ տպավորիչ արդյունքների: Կարելի է պնդել, որ միջնաժամկետ հեռանկարում պատերազմի ամենաշահող կողմն այդ երկիրն է: Բավական է նշել, որ արդյունքում Իրանին հաջողվեց ինչ-որ չափով լեգիտիմացնել իր միջուկային ծրագիրը (միջազգային հանրությունը զգալիորեն մեղմացրել է դիրքորոշումները այդ ծրագրի նկատմամբ): Կարելի է մեծ հավանականությամբ ենթադրել, որ պատերազմի արդյունքներն էապես զսպեցին ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ հակասությունները ռազմական միջոցներով լուծելու մտադրությունները: Ամրապնդվեցին Իրանի առաջատար դիրքերը նաեւ ՄՄԱ-ում եւ ողջ իսլամական աշխարհում: Բարելավվեցին Ահմադինեժադի դիրքերը ներքին քաղաքական դաշտում, որտեղ նրա դեմ լուրջ ընդդիմություն էր ձեւավորվում: Այդ գործչի վարկանիշը բարձրացավ նաեւ քաղաքական-վերլուծաբանական հանրությունում. օրինակ՝ Մոսկվայի Մերձավոր Արեւելքի ինստիտուտի տնօրեն Եվգենի Սատանովսկին Ահմադինեժադին բնորոշեց «որպես սառնասիրտ եւ տաղանդավոր գործիչ»:

**Պատերազմի հետեւանքները եւ Հայաստանը.** Հայտնի է, որ ՀՀ-ն եւ հայությունը հստակ արտահայտված ազգային շահեր ունեն ՄՄԱ տարածաշրջանում: Լիբանանի եւ ընդհանրապես ՄՄԱ-ի հայկական համայնքները մշտապես տուժում են շարունակաբար ընթացող ռազմական գործողություններից, եւ այդ առումով վերջին պատերազմը բացառություն չի կազմում: Ակնհայտ է, որ Լիբանանի ենթակառուցվածքների փլուզումը նպաստում է, որպեսզի հայերը լքեն տարածաշրջանը: Միեւնույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ Երուսաղեմում, բացի հայկական համայնքից, տեղակայված է հայության ազգային հարստության մի զգալի մասը, եւ այդ առումով մոտեցումները ՄՄԱ զարգացումներին պետք է կրեն հավասարակշռված բնույթ:

Այսօր ՀՀ հանրությունում լսվում են առաջարկներ Լիբանան խաղաղապահներ ուղարկելու վերաբերյալ: Նկատենք, որ դրանք զուրկ չեն հիմնավորումից. բոլոր պարագաներում նման քայլը պակաս արդարացված չէ, քան Իրաք զորամիավորում ուղարկելը: Միեւնույն ժամանակ, հայտնի է, որ նման խնդիրները լուծվում են մեծ տերությունների որոշումների համատեքստում: Այդ առումով անհամեմատ ավելի հրատապ են ՄՄԱ-ում ՀՀ քաղաքական, տեղեկատվական ներկայության խնդիրները, որոնք առայժմ բավարար լուծումներ չեն ստացել:

ՄՄԱ զարգացումներն անուղղակիորեն կապված են նաեւ ԼՂՀ

հիմնախնդրի հետ: Այդ համատեքստում պատերազմի արդյունքները, թերեւս, պետք է դրական գնահատել: Նման մոտեցումը հիմնավորվում է հետեւյալ նկատառումներով.

❖ Կարճաժամկետ հեռանկարում ԱՄՆ՝ Իրանի դեմ ռազմական գործողություններ կատարելու հավանականությունը նվազել է, ինչն իր հերթին նվազեցնում է Իրանի հետ սահմանամերձ ԼՂՀ ազատագրված տարածքները միջազգային ուժերի վերահսկողության տակ դնելու հրատապությունը:

❖ Պատերազմի արդյունքում Ռուսաստանի եւ Իրանի դիրքերի ամրապնդումը նպաստելու է այդ երկրների եւ ԱՄՆ-ի միջեւ ԼՂՀ խնդրում ուժերի հարաբերական հավասարակշռության հաստատմանը. նման իրավիճակը մեծացնում է ՀՀ դիվանագիտական խուսանավման հնարավորությունները:

**ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՃԳՆԱԺԱՄ.  
ՀԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄ  
Սուրեն Մանուկյան**

Հունիսի 25-ին Իսրայելի հարավում գտնվող Քերեն-Շալոմ վայրում պաղեստինյան զինյալների իրականացրած ռազմական գործողության հետևանքով զոհվեց երկու հրեա զինվորական, մի քանիսը վիրավորվեցին, իսկ կապրալ Գիլադ Շալիթը առևանգվեց: «Համաս» խմբավորման թվում է թե սովորական դարձած այս քայլին Իսրայելն արձագանքեց շատ կտրուկ՝ սկսելով լայնամասշտաբ գործողություն, որի նպատակ հռչակվեց ոչ միայն կապրալի ազատագրումը, այլ նաև Ղազայում եւ Հորդանան գետի արեւմտյան ափին ստեղծված «ահաբեկչական ենթակառուցվածքի» վերացումը:

Հունիսի 12-ին ռազմական գործողությունների շրջանակն ավելի ընդլայնվեց, երբ Իսրայելը սկսեց Լիբանանի դեմ ռազմական գործողություն՝ ի պատասխան լիբանանյան շիական «Հիզբալլահ» կազմակերպության կողմից իրականացված հարձակման եւ երկու իսրայելական զինվորի առևանգման: Լիբանանը շրջափակվեց ծովից եւ օդից, Իսրայելը զանգվածային հարվածներ հասցրեց Լիբանանի հարավային շրջաններին: Ռազմական գործողությունները շարունակվեցին մեկ ամսից ավելի, եւ միայն մեծ ջանքերի գնով հնարավոր եղավ կանգնեցնել արյունահեղությունը եւ պատերազմող կողմերին ստիպել զինադադար հայտարարել:

Պատերազմի ավարտից հետո շատերը սկսեցին քննարկել դրա «իսկական» պատճառները, ընթացքը եւ հետևանքները՝ հայտարարելով, որ այն ոչ թե տեղային, տարածաշրջանային բախում էր, այլ ուներ ավելի մեծ համատեքստ՝ պայքար Մերձավոր Արեւելքի տիրապետության համար, ԱՄՆ-ի կողմից Իրանի դեմ ուղղված ընթացիկ գործողություն, Մեծ Մերձավոր Արեւելք նախագծի իրականացման հերթական քայլ եւ այլն:

Այս ամենը չժխտելով՝ փաստենք, սակայն, որ լիբանանյան ճգնաժամն ավելի հետաքրքրական արդյունքներ արձանագրեց տարածաշրջանային քաղաքականության տեսակետից:

34 օր շարունակված պատերազմը մերձավորարեւելյան քաղաքականությունում առանձնապես նոր երեւոյթներ ի հայտ չբերեց: Սակայն այն վերստին բացահայտեց եւ վերջնականապես բյուրեղացրեց մի շարք միտումներ, որոնք արդեն տեւական ժամանակ տարածաշրջանային իրողություններ են:

1. Պատերազմը եւս մեկ անգամ փաստեց, որ **արաբա-իսրայելական հակամարտությունն ամենաէականն է Մերձավոր Արեւելքի համար**: Այն հսկայական խորություն ունի եւ, հետեւաբար, խնդրի ինչ-որ լուծում երբեւէ դժվար է ակնկալել: Դրա վկայությունն է այն, որ պատերազմից հետո երկու կողմն էլ հայտարարեցին իրենց հաղթանակի մասին:

2. Պատերազմը ցույց տվեց, որ **Իրանը հոյակապ տիրապետում է «փափուկ ուժին»**: Լոնդոնի միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտի հրատարակած զեկույցը նշում է այն առավելությունները, որ ունի Իրանը ԱՄՆ-ի հետ հնարավոր հակամարտության պարագայում: Վաշինգտոնի կոշտ ուժի (hard power) գործադրմանն Իրանը հակադարձում է փափուկ ուժը (soft power): Իրանը տիրապետում է տարածաշրջանային իրողություններին, քաջածանոթ է լեզուներին եւ մշակույթներին, ունի ամուր պատմական կապեր եւ հարեւանների հետ հարաբերվելու վարչական հմտություններ:

Թեեւ իրանական վերնախավը կրկնեց ավանդական հռետորականությունը՝ մեղադրելով «սիոնիստական վարչակարգին» եւ «նրան սատարող Արեւմուտքին» պաղեստինյան եւ լիբանանյան ժողովրդի իրավունքների ոտնահարման մեջ, սակայն միաժամանակ Թեհրանը դիվանագիտական նրբություն դրսեւորեց՝ ճգնաժամի ամբողջ ընթացքում խուսափելով ուղղակի ներգրավվածությունից, հայտարարելով, որ Իրանը մտադրություն չունի խառնվել Լիբանանի ներքին գործերին: Սրանով, թվում է, Իրանը շարունակում էր մնալ իր ժամանակակից դիվանագիտության հիմնաքարերից մեկի՝ դրական չեզոքության շրջանակներում, որը ցուցաբերվել էր նաեւ իրաքյան եւ աֆղանական գործողությունների ժամանակ:

Միաժամանակ Իրանը կարողանում էր իրադարձություններն ուղղորդել իրեն հարմար ուղեծրով՝ իր ազդեցությունը մեծացնելով լիբանանյան ներքին գործերին, մահմեդական առաջնորդի դերը

ստանձնելու հավակնություն ներկայացնելով եւ որոշակիորեն երկրորդ պլան մղելով սեփական միջուկային ծրագրի հետ կապված խնդիրները:

**3. Արաբական պետությունները խոր ճգնաժամի մեջ են:** Նրանք չեն կարողանում երկրի ներսում ծագող սոցիալական եւ տնտեսական հարցերին համարժեք պատասխաններ տալ: Սա բերում է բնակչության ընդվզման աճի, որը, զգալով պետական իշխանության թուլությունը, ավելի ակտիվորեն է դրսեւորում իրեն քաղաքական կյանքում: Արաբական պետությունները ցույց տվեցին իրենց թուլությունը նաեւ միջազգային ասպարեզում: Ճգնաժամի ընթացքում արաբական աշխարհը պառակտվեց եւ միասնական դիրքորոշմամբ հանդես չեկավ: Այսօր օրակարգում է արաբական աշխարհի առաջնորդի խնդիրը, այն պայմաններում, երբ տարածաշրջանի հիմնական դերակատարությունը հետզհետե անցնում է ոչ արաբական երկրներին՝ Թուրքիային եւ Իրանին:

**4. Տարածաշրջանն արագացող տեմպերով իսլամականանում է:** Այս պայմաններում, երբ ազգայնական արժեքների վրա հիմնված արաբական դասական աշխարհիկ պետությունը ցույց է տալիս իր անարդյունավետությունը, առաջանում է գաղափարական նոր հիմնավորման անհրաժեշտություն: Տարածաշրջանում ավելի ընդունելի են դառնում հենց իսլամական գաղափարախոսությունները: Սա ապացուցվում է Պաղեստինյան ինքնավարության ընտրություններում «*Համասի*» տարած հաղթանակով, Իրաքում ամերիկյան զորքերի գործողությունների հետեւանքով՝ իսլամականների ազդեցության շեշտակի աճով եւ այս հակամարտության շնորհիվ՝ «*Հիզբալլահի*» քաղաքական կշռի մեծացմամբ:

**5. Տարածաշրջանային ճգնաժամերի լուծման համար ընդունված բանաձեւերն անարդյունավետ են:** ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1701 բանաձեւը, նմանատիպ այլ բանաձեւերի եւ ընդունված փաստաթղթերի պես, անհրազործելի է: Ըստ այս բանաձեւի՝ լիբանանյան բանակի 15 հազար զինվոր պետք է զինաթափեն «*Հիզբալլահի*» զինյալներին: Վատ զինված, առանց հակահրթիռային համակարգերի, ռեակտիվ ինքնաթիռների եւ ռազմական նավատորմի լիբանանյան 38 հազարանոց բանակը (որի զգալի մասը շիաներ են)

նույնիսկ մեծ ցանկության դեպքում, ինչը նույնպես կասկածներ է հարուցում, ուղղակի հնարավորություն չունի զինաթափել լավ զինված եւ մարտունակ «*Հիզբալլահին*»:

**6. Լիբանանը դատապարտված է մնալ տարածաշրջանի խոցելի տարրը:** Ամեն անգամ, երբ այս երկիրը տեւական խաղաղության ընթացքում վերականգնվում է՝ հզորացնելով իր տնտեսությունը եւ դառնալով տարածաշրջանային ֆինանսական կենտրոն, բռնկվում է նոր ճգնաժամ, եւ Լիբանանը նորից տասնամյակներ հետ է մղվում: Այսօր էլ երկրի ենթակառուցվածքը գրեթե ամբողջովին ոչնչացվել է: Բեյրութի միջազգային օդանավակայանը, երկրի կենտրոնական եւ հարավային մասերը միավորող ճանապարհների 80 տոկոսը եւ բոլոր կամուրջները ավերված են: Թեեւ հայտարարվում է, որ հարվածների նշանակետերը «*Հիզբալլահի*» կենտրոնակայաններն են եղել, սակայն ավերվել են նաեւ բնակելի շենքեր, էլեկտրամատակարարման օբյեկտներ: Հսկայական կորուստներ է կրել Լիբանանի զբոսաշրջությունը: Տասնյակ հազարավոր լիբանանցիներ լքել են երկիրը: Եվ չի կարելի ասել, թե այս իրողությունը շատ է անհանգստացնում արաբական աշխարհին: Թերեւս, նոր հզոր հավակնորդ, ի դեմս Լիբանանի, նրանց ամենեւին էլ պետք չէ:

**7. Իսրայելական պետությունը ձեւափոխվել է:** Այն այլեւս ռազմական դրության մեջ ապրող նախկին զինվորական պետությունը չէ: Երկիրը ղեկավարող քաղաքացիական առաջնորդներ Օլմերտը եւ Պերեսը ոչ միայն չցանկացան կամ չկարողացան ամրապնդվել ռազմական առաջնորդների դերում: Իսրայելական վերլուծաբան Գելլերի խոսքերով, զինվորների ազդեցությունը քաղաքականության վրա կրճատվել է, եւ սա թույլ է տվել խուսափել զոհերի ավելի մեծ թվից:

Իսրայելը հայտարարում է, որ հասել է նպատակին՝ դուրս մղել «*Հիզբալլահին*» քսան տարի շարունակ ամրացվող դիրքերից, ոչնչացրել նրա ռազմական ներուժի զգալի մասը, իսկ սա կարելի է հաղթանակ համարել, քանի որ պարտիզանական պատերազմում չեն լինում միանշանակ հաղթողներ: Հենց սա էլ հստակ ընդգծում է իսրայելական ներկա եւ նախկին պետության միջեւ տարբերությունը. նախկինում իսրայելական հասարակությունը չէր խուսափում զոհերից եւ պատրաստ էր ընդունել միայն վերջնական եւ միանշանակ, ոչ մեկի կողմից կասկածներ չառաջացնող հաղթանակը:

1982թ. Իսրայելը նմանատիպ գործողություններ արդեն իրականացրել էր: Սակայն այն ժամանակ իսրայելական բանակը հասել էր մինչև Բեյրութ, պաշարել այն եւ ռմբակոծել այնքան ժամանակ, մինչև հակառակորդը՝ ՊԱԿ-ը (Պաղեստինի ազատագրության կազմակերպություն) հեռանա Թունիս: Այսօր «Յիզբալլահն» ընդամենը հեռացել է երկրի խորքը եւ չի պատրաստվում լքել Լիբանանը կամ զենքերը վայր դնել: Թեեւ կա նրա գործողությունների եւ դրա հետեւանքների նկատմամբ որոշակի դժգոհություն, սակայն լիբանանյան հասարակությունում նրա ժողովրդականությունը մնում է շատ բարձր: Եվ սա հնարավորություն է տալիս ավելացնել նրա կշիռը նաեւ քաղաքական դաշտում:

Այսպիսով, լիբանանյան ճգնաժամը վերստին ի հայտ բերեց արդեն իսկ գոյություն ունեցող իրողությունները, որոնք դեռ տեւական ժամանակ կանխորոշելու են Մերձավոր Արեւելքի զարգացումը:

**ՄԵՐՁՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ  
ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ  
Փազիկ Տերտերյան**

Տեղեկատվական գործողությունների դերը Մերձավոր եւ Սիջին Արեւելքում (ՄՄԱ) ընթացող զարգացումներում դժվար է գերազնահատել: Համաձայն Վաշինգտոնի Ռազմավարական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնի Մերձավոր Արեւելքի ծրագրի ղեկավար Ջոն Ալտերմանի՝ ս.թ. հուլիս – օգոստոս ամիսներին բռնկված պատերազմի գլխավոր զենքը տեղեկատվությունը, քարոզչությունը եւ քաղաքական տեխնոլոգիաներն են, ու այս ոլորտում Արեւմուտքը կորցրել է իր արտոնյալ դիրքերը: Նման մոտեցումը (որը բաժանում է փորձագիտական հանրության գերակշռող մասը) ենթադրում է, որ ՄՄԱ-ի ռազմաքաղաքական վերջին զարգացումներն՝ առանց տեղեկատվական գործողությունների վերլուծության, անհնար է համարժեք ընկալել:

**Իսրայելի եւ ԱՄՆ-ի տեղեկատվական մարտավարությունը.** Ըստ մի շարք վերլուծաբանների՝ գերված զինծառայողներին ազատելու պատրվակով պատերազմ սկսելով «Հիզբալլահի» եւ «Համասի» դեմ, ժողովրդականություն չվայելող Էհուդ Օլմերտը (վերջինիս վարչապետությունը իսրայելական հանրության զգալի մասն ընկալում է Արիել Շարոնի հիվանդությամբ պայմանավորված պատահականություն) ուզում էր ցուցադրել իր վճռականությունը եւ իսրայելյան քաղաքացիներին «տեր կանգնելու» հաստատականությունը: «Կապրալ Գիլադ Շալիթի ազատման գործողություն» արտահայտությունը հավակնում էր վերածվելու հաղթական պատերազմի կարգախոսի: Օլմերտի որոշումը մեկնաբանվում էր նաեւ որպես զուտ հոգեբանական-«մարզչական» գործողություն, որի ընթացքում դեռեւս պատերազմ չտեսած իսրայելցիների մոր սերունդը պետք է «սովորեր հաղթել արաբներին»: Սակայն հետագա զարգացումներն արժեզրկեցին «կապրալի ազատման» եւ «հաղթել սովորելու» կարգախոսները. դրանք կորցրին իրենց տեղեկատվական նշանակությունը, եւ ներկայումս հակամարտող կողմերը բանակցություններ են վարում գերիների փոխանակման վերաբերյալ:

Ինչպես ցույց են տալիս ներկայումս Իսրայելում ծայր առած ներքաղաքական զարգացումները, մասնավորապես՝ Օլմերտի վարչակազմին, նախագահ Կացավին եւ *ՑԱԽԱԼ-ի* հրամանատարությանը ներկա-

յացված մեղադրանքները, այդ երկրի իշխանությունները ներքին տեղեկատվական ոլորտում կանգնել են լուրջ հիմնախնդիրների առջև: Որոշ փորձագետների կարծիքով՝ ստեղծված իրադրությունը կարելի է բնութագրել որպես համակարգային ճգնաժամ, ինչը, մասնավորապես, նպաստելու է արտագաղթի աճին:

Անկախ արդյունքներից, անմիջական հակառակորդների նկատմամբ Իսրայելի վարած տեղեկատվական մարտավարությունն ավելի քան ակտիվ էր: Լիբանանի նկատմամբ ռազմական գործողությունների առաջին օրն Իսրայելի օդուժը փորձեց ռմբակոծել եւ ոչնչացնել «*Հիզբալլահի*» «Ալ-Մանար» հեռուստակայանի գլխավոր ալեհավաքը, սակայն չհասավ իր նպատակին: Ռմբակոծման առիթով Լրագրողների համաշխարհային ֆեդերացիան սուր քննադատության ենթարկեց եւ դատապարտեց Իսրայելի գործողությունները: Վերջինս, ի նշան բողոքի, դուրս եկավ այդ ֆեդերացիայից, սակայն ստիպված էր, հաշվի առնելով համաշխարհային հանրությունում Իսրայելի շուրջ ձեւավորվող անբարենպաստ տեղեկատվական իրավիճակը, դադարեցնել «Ալ-Մանարի» ռմբակոծումը: Միեւնույն ժամանակ, *ՅՄԽԱԼ-ը* չէր դադարեցնում փորձերը՝ էլեկտրոնային միջոցներով խաթարել այդ հեռուստակայանի բնականոն աշխատանքը:

Միջազգային հասարակական կարծիքի ձեւավորման գործում, անշուշտ, կարեւորագույն դերակատարում ունի ինտերնետը: Պատերազմի օրերին Իսրայելի ԱԳՆ-ն հանձնարարել էր դիվանագիտական դասընթացների ուսանողներին ավելի հաճախ մասնակցել ինտերնետային զանազան ֆորումներին, կայքերում զետեղել իսրայելաճապաստ հաղորդագրություններ: Ինչպես հայտնի է, նման տեխնոլոգիաներ իրականացնում են նաեւ ամերիկյան եւ չինական զինված ուժերի «հոգեբանական գործողությունների» ստորաբաժանումները, սակայն իսրայելցիները նկատելիորեն կատարելագործեցին դրանք: Հրեական ուսանողների միջազգային միության կողմից մշակվել է հատուկ ծրագիր, որը թույլ է տալիս ինտերնետի միջոցով կապել այդ միության բոլոր անդամներին մի ցանցում: Այդպիսով, եթե միության անդամներից մեկը որեւէ կայքում տեսնում է հակաիսրայելական հրապարակումներ, պատերազմի թեմային առնչվող հարցումներ կան քվեարկություններ, ապա դրա մասին անմիջապես տեղեկացվում են «ցանցի» մնացյալ անդամները (մոտ 15 հազար հոգի), որոնք եւ համապատասխան ձեւով արձագանքում են:

Պատերազմական գործողությունների ընթացքում իսրայելցիները լայնորեն օգտագործում էին արաբերեն ուղղված սադրիչ քարոզչական հեռախոսազանգերը (*Alfa Mtc* եւ *Touch* իսրայելական հեռախոսա-

ցանցերի միջոցով) եւ *SMS* հաղորդագրությունները: Դրանք, ըստ արաբական ՁԼՄ-ի, կենտրոնացված բնույթ էին կրում եւ կազմակերպվում էին *ՑՍԽՍԼ-ի* կողմից: Չեռախոսազանգերի եւ *SMS-ների* հիմնական նպատակը հոգեբանական ճնշումը եւ «*Չիզբալլահի*» նկատմամբ բացասական վերաբերմունքի ձեւավորումն էր. վերջինս ներկայացվում էր որպես արաբների դժբախտության աղբյուր: Նկատենք, որ արաբական կողմն ինչ-որ պահից սկսեց նմանատիպ տեխնոլոգիաներ կիրառել Իսրայելի դեմ:

Սակայն պատերազմի ամենածավալուն տեղեկատվական գործողությունը պետք է համարել օգոստոսի 10-ին Մեծ Բրիտանիայում ինքնաթիռների պայթեցումներ ծրագրող ահաբեկչական ցանցի բացահայտումը: Չբացառելով նման ցանցի առկայությունը եւ ահաբեկչության հնարավորությունը՝ անհրաժեշտ է ամրագրել, որ տեղեկատվության սփռումն այդ խնդրի շուրջ ընդունել էր տոտալ բնույթ<sup>1</sup> եւ ընթանում էր որոշակի՝ Իսրայելին ձեռնտու համատեքստում, քանի որ վերջինիս պայքարը նույնպես որակվում է որպես հակաահաբեկչական: Ահաբեկիչների վերաբերյալ լրահոսը, ինչպես նաեւ ավիաչվերթների շուրջ ծագած բազմաթիվ հարցերի քննարկումը տեղեկատվական դաշտից դուրս մղեցին իսրայելա-արաբական հակամարտության վերաբերյալ տեղեկությունները, որոնք այդ պահին արդեն անբարենպաստ էին Իսրայելի համար. Լիբանանում զոհվում էին խաղաղ բնակիչներ եւ երեխաներ, իսկ ռազմական գործողություններում ոչնչացվում էր իսրայելական զրահատեխնիկան: Այսինքն՝ բրիտանական ահաբեկիչների սյուժեն նպատակ ուներ շեղել միջազգային հանրության ուշադրությունը ՄՍԱ-ում տեղի ունեցող իրադարձություններից:

Բնորոշ է, որ բրիտանական օդային ահաբեկիչներին վերաբերվող հաղորդումներն առանձնապես շատ էին ամերիկյան ՁԼՄ-ում: Արդյունքում՝ այդ երկրում մի պահ գրեթե դադարեցվեցին լուսաբանվել մերձավորարեւելյան զարգացումները: Նման արտառոց երեւույթն առիթ հանդիսացավ ամերիկյան իրականության համար աննախադեպ բողոքի ցույցի Վաշինգտոնում՝ ուղղված ԱՄՆ ՁԼՄ-ում արաբա-իսրայելական հակամարտության վերաբերյալ տեղեկատվության պակասի դեմ:

Ընդհանուր առմամբ պատերազմի առաջին փուլում տեղեկատվական ոլորտում նախաձեռնությանը տիրում էր Իսրայելը: Սակայն հետագա զարգացումները փոխեցին իրավիճակը: Որպես մասնավոր պատճառներ՝ լրագրողները նշում են իսրայելական կոշտ ռազմական գրաքննությունը (արգելվում էր հաղորդել սեփական զոհերի թիվը, հրթիռակոծման հետեւանքները եւ այլն), ինչին նրանք ստիպված ենթարկվում էին, եւ դա լրացուցիչ հակակրանք էր առաջացնում

Իսրայելի գործողությունների հանդեպ: Նկատենք, որ այդ երկրի *գլխավոր ռազմական գրաքննիչը* պատերազմական պայմաններում իրավունք ունի փակել ցանկացած թերթ, հեռուստաալիք, ինչպես եւ կարող է հրամայել ընդհանրապես դադարեցնել ռազմական գործողությունների լուսաբանումը: Լրագրողների հանդեպ միանգամայն այլ մարտավարություն էին կիրառում Լիբանանի իշխանությունները եւ «*Հիզբալլահի*», որոնք իրենց կողմից վերահսկվող տարածքներում լրագրողներին տվել էին գրեթե բացարձակ ազատություն:

***Իսլամական աշխարհի տեղեկատվական մարտավարությունը.***

Հակամարտության ընթացքում ակտիվություն ցուցաբերեցին արաբական հեռուստակայանները՝ հատկապես «*Ալ Ջազիրան*», Իրանի եւ «*Հիզբալլահի*» լրատվական-քարոզչական միջոցները: Նրանք կարողացան լուծել, մասնավորապես, իրենց առջեւ դրված հետեւյալ խնդիրները.

- ❖ Կասեցվեցին հակառակորդի՝ շիական «*Հիզբալլահի*» եւ Պաղեստինի ու Լիբանանի սուննի բնակչության միջեւ պառակտում մտցնելու պլանները (ինչն Իսրայելի ռազմավարական նպատակներից էր):

- ❖ Իսլամական աշխարհին եւ մասամբ միջազգային հանրությանը ներշնչեցին պատերազմում արաբների տարած անվիճելի հաղթանակի պատրանքը եւ այդպիսով ցրեցին Իսրայելի անպարտելիության ավելի քան կեսդարյա առասպելը:

- ❖ Իրենց գործողություններով նպաստեցին պառակտված արաբական աշխարհի գաղափարական համախմբման գործընթացին:

Պետք է շեշտել, որ հակամարտության ընթացքում ԱՄՆ եւ Իսրայելի տեղեկատվական գործողությունների զգալի մասն ուղղված էր Իրանին: Բավական է նշել հայտնի քաղաքական տեխնոլոգ Բեռնարդ Լյուիսի հայտարարությունն ամերիկյան մամուլում, թե հրադադարի օրը՝ օգոստոսի 21-ին, Իրանը միջուկային հարված կհասցնի Իսրայելին: Իրենց հերթին իրանական կայքերը (*Iranatom.ru, Iran.ru*) գործում էին օպերատիվ: Մասնավորապես՝ *Iran.ru*-ի ամենօրյա լրահոսի ցանկը (*system@iran.ru*) հայտնվեց վերլուծական կենտրոնների եւ վերլուծաբանների էլեկտրոնային փոստարկղերում. այդպիսով առաջարկվում էր դյուրին ձեռով օգտվել կայքի մատակարարած տեղեկատվությունից: Հատկանշական է նաեւ, որ պատերազմի օրերին Իրանի նախագահ Ահմադինեժադը բացեց սեփական կայքը (*Ֆարսի, արաբերեն, անգլերեն*

եւ ֆրանսերեն լեզուներով), որտեղ զետեղված են ոչ միայն նրա կենսագրական տվյալները, այլեւ հետեւողականորեն հրապարակվում են Իրանի նախագահի մոտեցումները զանազան քաղաքական եւ հասարակական երեւոյթների վերաբերյալ: Տեղեկատվական պատերազմների տրամաբանությանն է ենթարկվում նաեւ Ահմադինեժադի հեռուստաբանավեճ վարելու առաջարկությունը Բուշին: Հատկապես շեշտենք, որ տեղեկատվական դաշտում Իրանը կարողացավ փոխել իսլամի կերպարը դոսի աշխարհի պատկերացումներում. անկազմակերպ, բղավող ամբոխի փոխարեն ներկայացվեց համառ կռվող եւ նորագույն տեխնոլոգիաներ կիրառող հանրություն:

**Պատերազմի տեղեկատվական ընկալումը միջազգային հանրությունում.** Իսրայելի կողմից ռազմական գործողություններ սկսելը միջազգային հանրությունն ընկալեց Իրաքում վարվող ամերիկյան քաղաքականության համատեքստում, որի նկատմամբ արդեն իսկ ձեւավորվել է կայուն բացասական վերաբերմունք: Ակնհայտ է, որ գլոբալ տեղեկատվական դաշտում հակաիսրայելական եւ հակաամերիկյան տրամադրությունների ձեւավորման գործում կարեւորագույն դերակատարում ունեն ԱՄՆ աշխարհաքաղաքական մրցակիցները եւ այդ տերության քաղաքականության հետ անհամաձայն տարաբնույթ կազմակերպությունները:

Իսրայելի հանդեպ հանրային բացասական կարծիքի ձեւավորմանն էապես նպաստեց նաեւ զոհված խաղաղ բնակիչների եւ երեխաների վերաբերյալ տեղեկատվության տարածումը (հարկ է նկատել, որ այս ոլորտում արաբական կողմը լրատվական գործակալություններին երբեմն ներկայացնում էր կեղծված տվյալներ): Մասնավորապես՝ միջազգային իրավապաշտպան *Amnesty International* կազմակերպությունը մեղադրեց Իսրայելին պատերազմական հանցագործություններում: Հատկանշական է, որ պատերազմից հետո ԱՄՆ-ում ի հայտ եկան նեոկոնսերվատորների եւ իսրայելական լոբբիի դեմ ուղղված բազմաթիվ հոդվածներ եւ նյութեր:

Բավական հստակ հակաիսրայելական եւ արաբամետ դիրքորոշում ցուցաբերեց ռուսաստանյան *PTP* հեռուստաալիքը, մինչդեռ «*Первый канал*» կայանն ավելի հավասարակշռված էր մեկնաբանում պատերազմական գործողությունները: Ընդհանուր առմամբ ռուսաստանյան ՋԼՍ ավելի բարյացակամ էին արաբների հանդեպ. բավական է նշել, որ *PTP*, «*Первый канал*» եւ *HTB* կայանները «*Հիզբալլահի*» քարոզչական նյութերը հեռարձակել են 253 անգամ, իսկ Իսրայելինը՝ 36:

**Չետևություններ.** 2006-ի ամռանը տեղի ունեցած պատերազմում տեղեկատվական-հոգեբանական գործոնը կարելուրագույն դերակատարում ունեցավ: Ռազմական ոլորտում առավելություն ունենալով եւ փաստորեն լուծելով իր առջեւ դրված մարտավարական խնդիրների զգալի մասը՝ Իսրայելը եւ նրա դաշնակից ԱՄՆ-ը տեղեկատվական-հոգեբանական ոլորտում զգալի կորուստներ ունեցան: Դա մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ ՄՄԱ-ում ընթացող ԱՄՆ, Իսրայել–Իսլամական աշխարհի շարունակական պայքարում արաբների դիմադրությունն արտահայտվեց ոչ թե ահաբեկչական-շահիդական տեսքով, այլ տեխնոլոգիական ոլորտում. նրանք ցուցաբերեցին ռազմական հմտություն, իսկ իրենց հաջողությունները եւ հակառակորդի բացթողումները համապատասխան տեղեկատվական հնարքների միջոցով ներկայացրին հանրությանը:

<sup>1</sup> Բրիտանական ահաբեկիչների վերաբերյալ տեղեկատվական գործողությունն ամենայն հավանականությամբ մշակվել է ԱՄՆ-ում: Ահաբեկչության թեման դարձել է ամերիկյան տեղեկատվական քաղաքականության կարելուրագույն բաղադրիչը (հատկանշական է, որ բրիտանական ահաբեկիչների վերաբերյալ տեղեկատվության տոտալ տարածման արդյունքում նախագահ Բուշի վարկանիշը փոքր-ինչ բարձրացել է): Ի լրումն, միայն այդ տերությունն է, որն ունի գլոբալ տեղեկատվական դաշտը «լցնելու» ռեսուրսներ: Բավական է նշել, որ ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի անմիջական ղեկավարությամբ գործում է դեռեւս 1953թ. հիմնված *ԱՄՆ Տեղեկատվական գործակալությունը՝ USIA*, որի ղեկավարն է նախագահի *Տեղեկատվական հարցերով գլխավոր խորհրդակցանք*: Գործակալությունն ունի 10 հազար հաստիք, 200 բաժանմունք աշխարհի 120 երկրներում եւ թողարկում է տեղեկատվական ծրագրեր 62 լեզվով: ԱՄՆ նախագահի հրամանով 1999թ. ստեղծվել է մեկ այլ կառույց՝ *Միջազգային հասարակական տեղեկատվության խումբը՝ IPI*, որի խնդիրն է օգտագործելով հատուկ ծառայություններից ստացված տեղեկությունները՝ ներգործել օտարերկրյա կառավարությունների, կազմակերպությունների եւ առանձին անհատների զգացմունքների ու վարքի վրա: Միեւնույն ժամանակ, ամերիկյան տեղեկատվական պատերազմների մեխանիզմը ՄՄԱ-ում ներկայումս այնքան էլ արդյունավետ չի գործում: Դրա մասին, մասնավորապես, վկայում է այն փաստը, որ Իրաքի ամերիկյան հրամանատարությունը որոշում է ընդունել \$20 մլն տրամադրել ԱՄՆ եւ ՄՄԱ զանգվածային լրատվամիջոցների մոնիթորինգի համար: Մոնիթորինգի նպատակը տվյալների միասնական շտեմարանի ստեղծումը եւ դրա հիման վրա տարածաշրջանում ԱՄՆ իմիջի բարելավումն է: Բնորոշ է, որ այդ ծրագրի շրջանակներում նախատեսվում է *հրահրել* ամսական 4-8 «*դրական*» իրադարձություն եւ ամերիկացիների համար շահեկան դիրքերից լուսաբանել դրանք:

## **ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆԵՐԿԱ ՓՈՒԼԸ**

### ***Ռուբեն Սաֆրաստյան***

2002թ. Թուրքիայում իշխանության եկած իսլամամետ Արդարություն ու զարգացում կուսակցության (ԱԶԿ) կառավարությունը վերակառուցեց երկրի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների այն հիերարխիան, որն առանց զգալի փոփոխությունների գործում էր վերջին հինգ տասնամյակների ընթացքում: Մասնավորապես, վերանայվեց մերձավորարևելյան ուղղության նշանակությունը, եւ այն համարվեց կարեւորներից մեկը: Երկրի արտաքին գործերի գերատեսչության առջեւ նպատակ դրվեց բարելավել հարաբերություններն արաբական աշխարհի եւ Իրանի հետ՝ միաժամանակ որոշակիորեն սառեցնելով դաշնակցային հարաբերություններն Իսրայելի հետ: Համաձայն այդ նոր արտաքին քաղաքական ռազմավարության գլխավոր ճարտարապետ պրոֆ. Ա.Դավութօղլուի հաշվարկների, որը վարչապետ Ռ.Թ. Էրդողանի արտաքին քաղաքական հարցերով գլխավոր խորհրդականներից է, այդպիսով հնարավոր կլինի ապահովել Թուրքիայի համար միջնորդի դեր ինչպես մերձավորարևելյան հակամարտությունում, այնպես էլ տարածաշրջանի մի շարք պետությունների եւ Արեւմուտքի միջեւ հակասություններով լի հարաբերություններում: Արդյունքում՝ Թուրքիան կդառնա տարածաշրջանի առանցքային պետությունը, ինչն իր հերթին կնպաստի նրա նշանակության բարձրացմանը Եվրամիության համար եւ կարագացնի այդ կառույցին անդամակցելու գործընթացը:

Անցած տարիների ընթացքում Թուրքիան փորձեց իրականացնել վերելում նշված տեսական դրույթները: Քայլեր ձեռնարկվեցին արաբական երկրների եւ Իրանի հետ հարաբերությունները բարելավելու ուղղությամբ, սուր քննադատության ենթարկվեց Իսրայելի քաղաքականությունը Պաղեստինի նկատմամբ: Սակայն Թուրքիայի իսլամամետ ղեկավարները չհամարձակվեցին լրջորեն վերանայել Իսրայելի հետ դաշնակցային հարաբերությունները, ինչը եւ կանխորոշեց նրանց մերձավորարևելյան քաղաքականության այդ նոր ռազմավարության անհաջողությունը:

Մերձավոր Արեւելքում վերջին երկու ամիսների ընթացքում

ծավալվող լուրջ ճգնաժամը հնարավորություն է տալիս վարչապետ Ռ.Թ. Էրդողանին եւ նրա թիմակիցներին մեկ անգամ եւս փորձելու իրականություն դարձնել աշխարհի այդ կարելու տարածաշրջանում Թուրքիայի դերի եւ նշանակության կտրուկ աճի վերաբերյալ իրենց տեսական հաշվարկները: Այդ նպատակին հասնելու համար ընտրվեց «ակտիվ դիվանագիտության» տարբերակը, որը մշակվել էր դեռեւս անցյալ դարի 90-ականների սկզբին նախագահ Թ.Օզալի կողմից՝ հետխորհրդային տարածքի թյուրքալեզու հանրապետություններում Թուրքիայի գերիշխող դերը հաստատելու նպատակով:

### ***Թուրքիան եւ Իսրայել – ՀԱՄԱՍ հակամարտությունը***

Մերձավորարեւելյան ճգնաժամի սրացման ներկա փուլը տեղի է ունենում երկու՝ աշխարհագրական առումով առանձին, բայց եւ ներքուստ փոխկապակցված շրջաններում: Նրանցից առաջինը Գազայի շրջանն է, որտեղ ընթանում է Իսրայել – ՀԱՄԱՍ սուր հակամարտությունը: Այստեղ Թուրքիան, ըստ վերջին տարիներին արդեն ավանդույթ դարձած ձգտման, հենց սկզբից, կարճես թե վախենալով, որ իրենից կարող են առաջ ընկնել այլ պետություններ, փորձեց ստանձնել միջնորդի դեր: Սկզբնական շրջանում նա բացահայտորեն սիրաշահեց պաղեստինցիներին: Վարչապետ Էրդողանը հանդես եկավ պաղեստինամետ հայտարարությամբ՝ դատապարտելով Իսրայելին ռազմական գործողություններ սանձելու համար, իսկ ավելի ուշ արտգործնախարար Ա.Գյուլը, բնութագրելով Իսրայելի կողմից «այդքան մեծ թվով պաղեստինցիների սպանությունը ողջ աշխարհի աչքերի առջեւ» որպես «սարսափելի» գործողություն, պահանջեց, որ նա անհապաղ դադարեցնի հարձակումները պաղեստինցիների վրա: Միաժամանակ, Թուրքիան զգալի հումանիտար օգնություն ցույց տվեց պաղեստինցիներին եւ էլ ավելի մեծ օգնություն խոստացավ ցույց տալ մոտակա ապագայում:

Համարելով, որ պաղեստինցիների բարյացակամ վերաբերմունքն ապահովված է եւ ստանալով Իսրայելի համաձայնությունը, Թուրքիան պաշտոնապես հայտարարեց, որ ստանձնում է միջնորդ-խաղաղարարի դերը: Վարչապետ Էրդողանը հեռախոսազրույցներ ունեցավ ԱՄՆ նախագահ Ջ.Բուշի, Ռուսաստանի նախագահ Վ.Պուտինի, Մեծ Բրիտանիայի վարչապետ Թ.Բլերի եւ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Ք.Անանի հետ, որոնք գոհունակություն հայտնեցին Թուրքիայի այդ մտադրության կապակցությամբ: Դրանից հետո սկսվեցին բուն

միջնորդական բանակցությունները: Երդողանի խորհրդական պրոֆ. Ա.Դավութբոզլուն՝ այդ քաղաքական գծի գլխավոր նախաձեռնողը, շտապ ուղարկվեց Դամասկոս համոզելու Սիրիային՝ ճնշում գործադրել ԶԱՄԱՍ-ի վրա եւ ստիպել նրան մեղմելու իր դիրքը: Սակայն Դամասկոսը Թուրքիայի խնդրանքին չարձագանքեց:

Թուրքիան ստիպված էր գործել ինքնուրույն: ԶԱՄԱՍ-ի կառավարության ղեկավար Ի. Զանիյահը հրավիրվեց Անկարա, բայց նույնպես հրաժարվեց կատարել Թուրքիայի խնդրանքը եւ մեղմել իր դիրքը: Թուրքական միջնորդության այդ անհաջող փորձին վերջին հարվածը հասցրեց իսրայելական ավիացիան՝ ցուցադրաբար գետնին հավասարեցնելով Գազայի Էրեզի շրջանում գտնվող արդյունաբերական օբյեկտները, որոնք կառուցում էին թուրքական շինարարական կազմակերպությունները՝ այդպիսով «պատասխանելով» Թուրքիայի ղեկավարների հակաիսրայելական հռետորական վարժանքներին:

Թուրքիայի ձեռնարկած միջնորդական առաքելությունը պսակվեց կատարյալ անհաջողությամբ, իսկ թուրքական դիվանագիտությունը Մերձավոր Արեւելքում կրեց հերթական պարտությունը: Միաժամանակ պիտի նշել, որ Թուրքիայի քաղաքականությունը Իսրայել-ԶԱՄԱՍ հակամարտությունում ընդհանուր առմամբ դրական ընկալվեց երկրի ներսում: Թուրքիայի հասարակական կարծիքն անվերապահորեն սատարում է պաղեստինցիներին, եւ ԱԶԿ-ի կառավարության պաղեստինամետ հայտարարությունները, ինչպես նաեւ փորձերը՝ նպաստել կրակի շուտափույթ դադարեցմանը, նույնիսկ ձախողված, ընդունվեցին գոհունակությամբ: Երդողանին հաջողվեց շեղել իսլամամետ շրջանակների ուշադրությունը այն հանգամանքից, որ թուրք-իսրայելական դաշնակցային հարաբերությունները, ըստ էության, մնացին անսասան:

### ***Թուրքիան եւ Իսրայելի պատերազմը Լիբանանի դեմ***

Մերձավորարեւելյան ճգնաժամի ներկա փուլի հաջորդ թատերաբեմը Լիբանանն է: Հակազդելով «Հիզբալլահի» գործողություններին՝ Իսրայելը լայնածավալ ռազմական գործողություններ ձեռնարկեց այդ երկրի դեմ եւ ներխուժեց նրա հարավային շրջանները: Թուրքիայի ազգաբնակչությանը վերջին տարիներին հատուկ հակաիսրայելական տրամադրությունները հասան զագաթնակետին: Տեղի ունեցած հարյուր հազարանոց ցույցեր, քաղաքական շրջանակները դատապարտեցին Իսրայելին:

Ռ.Թ. Էրդողանը նույնպես դատապարտեց Իսրայելին, սակայն այս անգամ ավելի մեղմ, քան նախորդ դեպքում: Վարչապետը, փաստորեն հետեւելով ԱՄՆ-ի օրինակին, քննադատեց Իսրայելին ոչ թե հարեւան երկրի նկատմամբ ռազմական ագրեսիա կազմակերպելու, այլ «*Հիզբալլահի*» թշնամական գործողություններին անհամաչափ հակահարված հասցնելու համար: Պաշտոնական Թուրքիայի նման մոտեցումը վկայում էր, որ այս անգամ Անկարան, հաշվի առնելով իր բացառիկ բարենպաստ աշխարհաքաղաքական դիրքն ու հնարավորությունները, ինչպես նաեւ «պարզ» միջնորդության անհաջող փորձը, որոշել է կիրառել ավելի բարդ եւ բազմաբնույթ դիվանագիտական հնարքներ՝ ստեղծված իրադրությունից լավագույնս օգտվելու նպատակով:

Այդ հնարքներից էր, թերեւս, Թուրքիայի ձգտումը ակտիվորեն ներգրավել «գաղտնի դիվանագիտության» ոլորտում՝ քողարկված օգնություն ցույց տալով եւ՝ «*Հիզբալլահին*», եւ՝ Իսրայելին: Նույնիսկ հայտնի դարձած սակավաթիվ փաստերը հնարավորություն են տալիս գնահատել այդ ներգրավվածությունը որպես բավական լուրջ: Այսպես, օրինակ, Թուրքիան տրամադրեց իր տարածքը՝ «*Հիզբալլահին*» զենք ու զինամթերքի առաքման գաղտնի միջանցք կազմակերպելու համար եւ, միաժամանակ, թուրքական հետախուզությունը «*Հիզբալլահի*» մասին կարելուր տեղեկություններ էր տրամադրում իսրայելցիներին:

Թուրքիայի վարած ճկուն եւ բազմաշերտ քաղաքականությունը սովեց իր արդյունքները: Իսրայելը եւ նրա հովանավոր ԱՄՆ-ը սկսեցին դիտարկել Թուրքիան որպես ՄԱԿ-ի հովանու ներքո Լիբանանի հարավում տեղակայվելիք խաղաղապահ զինված ուժերի կարելուր բաղկացուցիչ: ՄԱԿ-ի համապատասխան առաջարկը գոհունակությամբ ընդունվեց եւ՝ Լիբանանի կառավարության, եւ՝ ԵՄ կողմից, որը գլխավորեց այդ խաղաղապահ առաքելությունն ու այդ պատճառով շահագրգռված էր մարտունակ եւ կարգապահ թուրք զորամիավորումների ներկայությամբ: Սիրիայի աջակցությունը կարողացավ ապահովել արտգործնախարար Ա.Գյուլը՝ այդ երկիր կատարած իր ուղեւորության ընթացքում: Գաղտնի խողովակներով, որոնք կապում են իսլամամետ ԱԶԿ-ի ղեկավարությանը Մերձավոր Արեւելքի արմատական իսլամական կազմակերպությունների հետ, ստացվեց նաեւ «*Հիզբալլահի*» համաձայնությունը:

Այսպիսով, Թուրքիայի համար ստեղծվեց բացառիկ բարենպաստ իրադրություն, որը սակայն պարունակում էր նաեւ ակնհայտ ու քողարկված վտանգների հնարավորություն: Տեղակայելով իր խաղաղապահներին հարավային Լիբանանում՝ Թուրքիան զգալիորեն

ուժեղացնում է իր դիրքերը Մերձավոր Արեւելքում եւ միաժամանակ հնարավորություն է ստանում ուղղակի առեւտրի մեջ մտնելու ԱՄՆ-ի ու ԵՄ-ի հետ, քանի որ վերջիններս են գլխավոր շահագրգռված կողմերը: ԱՄՆ-ից թուրքիան ակնկալում է աջակցություն Քրդական բանվորական կուսակցության (ՔԲԿ) դեմ պայքարում, ինչպես եւ՝ Յուսիսային Իրաք ներխուժելու եւ ՔԲԿ-ի դեմ պատժիչ գործողություն կազմակերպելու թույլտվություն, իսկ ԵՄ-ից՝ դիրքորոշման մեղմացում այժմ ընթացող անդամակցության բանակցություններում: Թուրքիայի համար կարեւոր է նաեւ ապահովել ՄԱԿ-ի ղեկավարության հնարավորինս բարյացակամ մոտեցումը իր նկատմամբ, քանի որ այդ կազմակերպությունն է Կիպրոսի հիմնահարցի կարգավորման բանակցություններում հիմնական միջնորդը:

Սակայն այդ առավելությունները կարող են մեկ վայրկյանում հոդս ցնդել, եթե տեղի ունենա ռազմական բախում թուրք խաղաղապահների եւ «Յիզբալլահի» միջեւ: Այն ոչ միայն կվտանգի Թուրքիայի տարիների ընթացքում այդքան մեծ ջանքերով կառուցված մերձավորարեւելյան քաղաքականության փխրուն համակարգը, այլեւ հաջորդ տարի նախատեսված նախագահական ու խորհրդարանական ընտրություններից առաջ հղի է լուրջ ներքաղաքական բարդություններով, քանի որ ԱԶԿ-ի դեմ առաջին հերթին դուրս կգան նրա հենարանը կազմող իսլամամետ շրջանակները:

Որոշակի արկածախնդրությամբ եւ առանց երկար վարանելու կարեւոր որոշումներ ընդունելու հատկությամբ օժտված վարչապետ եւ ԱԶԿ-ի առաջնորդ Ռ.Թ. Էրդողանն անտեսեց հնարավոր վտանգները եւ շատ արագ հայտարարեց Յարավային Լիբանան թուրք խաղաղապահներ ուղարկելու կառավարության որոշման մասին: Այդ որոշման վրա չազդեց նույնիսկ այն հանգամանքը, որ դրան դեմ էին ազգաբնակչության շուրջ 80%-ը, երկրի նախագահը, համարյա բոլոր քաղաքական ուժերը, ներառյալ ԱԶԿ-ի տեղական կազմակերպությունների մեծ մասը: Նախապատվությունը տրվեց հեռահար աշխարհաքաղաքական նպատակներին եւ կարճաժամկետ արտաքին քաղաքական հաշվարկներին:

Առանց մեծ դժվարության, Էրդողանի կառավարությանը հաջողվեց ապահովել երկրի խորհրդարանի համապատասխան դրական բանաձեւը (քանի որ այստեղ ԱԶԿ-ն ունի բացարձակ մեծամասնություն) եւ այդպիսով հնարավորություն ստանալ իրականացնելու իր մերձավորարեւելյան քաղաքականության ռազմավարական նպատակները: Սակայն ներկայումս թուրքական դիվանագիտությունն ավելի լծված է մարտավարական բնույթի խնդիրների լուծմանը. հնարավորինս քիչ

քանակությամբ ցամաքային ուժեր ուղարկել Լիբանան եւ տեղադրել նրանց այնպիսի շրջանում, որտեղ կբացառվի ուղղակի շփումը «Հիզբալլահի» զինյալների հետ: Ք Անանի հետ արդեն տեղի ունեցած բանակցություններում Թուրքիան առաջին հարցում գնաց որոշակի զիջումների, սակայն ակնկալում է դրական մոտեցում երկրորդ՝ ավելի կարեւոր հարցում: Նյու Յորք է ուղարկվել հատուկ պատվիրակություն, որը շարունակում է բանակցությունները ՄԱԿ-ի ու ԱՄՆ-ի ներկայացուցիչների հետ: Սակայն նույնիսկ դրական լուծելով այդ հարցը՝ Թուրքիային չի հաջողվի վերացնել բոլոր այն ռիսկերը, որոնցով հղի է նրա մերձավորարեւելյան հավակնոտ քաղաքականությունը:

## **ԻՍԼԱՄՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ** **Արաքս Փաշայան**

1990-ականներից ի վեր հետխորհրդային հանրապետություններում ազգային եւ կրոնական ընկալումները վերարժեւորվեցին: Իր համար նոր ուղի հարթեց նաեւ իսլամը, որը Կովկաս էր թափանցել դեռեւս 7-րդ դարում:

ԽՍՀՄ փլուզումից հետո իսլամի արմատավորումը հիմնականում ընթացավ յուրաքանչյուր հանրապետությանը հատուկ հանգամանքներում՝ առանձին դեպքերում կրելով միջազգային իսլամական կենտրոնների ազդեցությունը: Ի տարբերություն իսլամի ավանդական տարածման շրջանների, որտեղ իսլամը դերակատարում ունի նաեւ սոցիալ-քաղաքական կյանքում, հետխորհրդային տիրույթում այն հիմնականում պայմանավորում է հասարակության ավանդույթային եւ կենցաղային կողմերը:

ԽՍՀՄ իսլամադավան հանրապետությունների շարքում իսլամի յուրահատուկ նկարագրով առանձնանում է Ադրբեջանը, որի բնակչության մեծամասնությունը (94%) դավանում է իսլամ. այն ներկայացված է երկու ուղղություններով՝ շիա եւ սուննի: Իսլամադավան բնակչության զգալի մասը շիաներ են (շուրջ 70%): Ադրբեջանը շիա բնակչության թվով երկրորդ տեղն է զբաղեցնում Իրանի Իսլամական Հանրապետությունից հետո:

Ադրբեջանական ազգային ինքնության մաս են կազմում թյուրքականությունը, ինչպես նաեւ իսլամը. ադրբեջանցիների մեծ մասն իրեն համարում է մահմեդական՝ չնայած սեփական կրոնի ոչ համապարփակ իմացությանը կամ գրեթե չիմացությանը: Իսլամական ծիսակարգին հետեւող հավատացյալները կազմում են բնակչության 1/10-ը:

Չետխորհրդային շրջանում իսլամական վերածնունդն Ադրբեջանում ավելի շատ ընթացավ ազգայինի համատեքստում: Բաքուն հատկապես ընդգծում է ադրբեջանական «ազգային իսլամի» յուրահատկությունը, փորձում ստեղծել ադրբեջանական իսլամի բրենդ՝ ձգտելով պահպանել անկախությունը միջազգային իսլամական (հատկապես՝ իրանական) կենտրոնների հնարավոր ազդեցություններից:

Ադրբեջանական իսլամի յուրահատկության մասին է խոսում այն փաստը, որ բացի սուննիական եւ շիական մզկիթներից, Ադրբեջանում

կան «խառը» մզկիթներ, որտեղ հերթականությամբ աղոթում են շիաներն ու սուննիները:

Չնայած այն հանգամանքին, որ Ադրբեջանը, համաձայն իր իսկ սահմանադրության, աշխարհիկ պետություն է, երկրի իշխանություններն օգտագործում են իսլամական գործոնը՝ ամրապնդելու սեփական դիրքերը:

1994թ. նախագահ Յ.Ալիևի կատարած ուխտագնացությունը Սեքքա մեծ հնչեղություն ստացավ երկրում: Քաղաքական գործիչները՝ իշխանական, թե ընդդիմադիր, օգտագործում են իսլամական հռետորականությունը: Ադրբեջանում մշվում են բոլոր իսլամական տոները (աշուրա, ուրազա բայրամ, մավլուդ): Հեռուստատեսությամբ եւ ռադիոյով կան իսլամին մվիրված ժամեր, ազգային հանդիսությունների ժամանակ Ղուրանից հատվածներ են հնչեցվում: Երկրում գործում է շուրջ 1300 մզկիթ:

Ադրբեջանում միշտ լուրջ խնդիր է եղել կրոնական կադրերի պատրաստման հարցը: Այս նպատակով 1990-ականների սկզբին Բաքվում հիմնվեց իսլամական համալսարան՝ Սաուդյան Արաբիայի աջակցությամբ: 1992-ից Բաքվի համալսարանում սկսեց գործել իսլամական աստվածաբանության ֆակուլտետ: Ադրբեջանցի ուսանողները կրոնական կրթություն են ստացել հիմնականում Իրանում, Սիրիայում, Սաուդյան Արաբիայում, Եգիպտոսում, Թուրքիայում, Պակիստանում:

Պաշտոնական իսլամն Ադրբեջանում ներկայացնում է Կովկասի մահմեդականների վարչությունը (ԿՄՎ), որի գաղափարական ազդեցությունը տարածվում է նաեւ ԱՊՀ շիաների եւ Կովկասի սուննիների վրա: Կառույցը ֆինանսական միջոցներ է ստանում թե՛ պետությունից, թե՛ միջազգային իսլամական կառույցներից: 1980-ականների սկզբից այն գլխավորում է շեյխ ուլ-իսլամ հաջի Ալլահշյուքյուր Փաշազադեն: Դավանական համամասնությունը պահպանելու համար վարչության ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակվում է սուննի հոգեւորական:

Ադրբեջանում պաշտոնական իսլամը ներկայացնում է նաեւ Գիտական իսլամական խորհուրդը, որի հիմնական խնդիրներն են՝ ազգային կրոնական քաղաքականության մշակումը եւ իսլամին վերաբերող գրականության հրատարակումը:

Ադրբեջանում իսլամական պաշտոնական քաղաքականությունն ուղղված է երկրի աշխարհիկ բնույթի պահպանմանը, ինչը նկատի է առնում նաեւ իսլամի եւ արդիականության մերձեցում: Առանձին շրջանակներ առաջ են քաշում իսլամը պետական կրոն հռչակելու, իսլամական օրենքներն իրավական դաշտ մտցնելու, իսլամի ազդեցու-

թյունը հասարակական կյանքում ընդլայնելու գաղափարներ: Ադրբեջանում, օրինակ, հարց է բարձրացվել բազմակնության եւ ժամանակավոր ամուսնության մասին օրենք մտցնելու մասին: Պահանջվել է, որպեսզի չարգելվի կնոջը պաշտոնական փաստաթղթի համար լուսանկարվել գլխաշորով, ինչը 1999թ. օրենքի ուժ է ստացել:

Պաշտոնական իսլամի հետ կողք կողքի գոյատեւում է շիական ուղղվածությամբ «ժողովրդական իսլամը», որի դրսեւորումներից է սրբատեղիներ այցելելը: Դեռեւս խորհրդային շրջանում Ադրբեջանում սրբատեղիներ ուխտի գնալը շատ տարածված երեւոյթ էր (ի դեպ, այդ տարիներին իսլամական ծիսակարգով էին կատարվում հատկապես հարսանիքն ու թաղումը): Ներկայումս Ադրբեջանում հաշվվում է շուրջ 300 սրբատեղի, որոնցից ամենահայտնին Բաքվի մոտակայքում գտնվող Շյուվյալանն է:

Նշենք, որ Ադրբեջանում կրոնականությունը բարձր ցուցանիշ ունի հատկապես երկրի հարավային շիական շրջաններում (Մասալին, Բիլյասուվարի, Ջալիլաբադ, Լենքորան) եւ Ապշերոնի թերակղզում:

Սուննի իսլամի ներկայացուցիչներն Ադրբեջանում նույնպես զգալի թիվ են կազմում (իսլամադավանների շուրջ 30%-ը) եւ հիմնականում բնակվում են հյուսիսային շրջաններում: Մերժելով շիա իսլամը՝ սուննիներն այն համարում են հեթանոս բաղադրիչներով հագեցած եւ իրանցիների կողմից աղճատված: Այս տեսությունն ունի նաեւ քաղաքական կիրառում. խնդիրն այն է, որ շիա իսլամը հեռացնում է ադրբեջանցիներին իրենց թուրք ազգակիցներից եւ մերձեցնում իրանցիներին:

Ադրբեջանի անկախության ձեռքբերումից հետո այս երկրում իրենց ազդեցությունը տարածելու համար ի հայտ եկան թուրք-իրանական հակասություններ: Թեհրանը ձեռնամուխ եղավ զգալի ֆինանսական միջոցների ներդրմանը՝ հօգուտ Ադրբեջանում մզկիթների եւ կրոնական այլ հաստատությունների շինարարության, ինչպես նաեւ հոգեւոր կադրերի պատրաստման: Ադրբեջանում ազգայնականությունը չեզոքացնելու եւ շիական գործոնն ակտիվացնելու թեհրանի ջանքերն իրենց քաղաքական ենթատեքստն ունեին: Թեհրանին մտահոգում էր Ադրբեջանում ազգայնական տրամադրությունների աճը, ինչը կարող էր խթանել իրանական Ատրպատականում ազգային կամ անջատողական շարժումները:

Թեհրանից եկող մարտահրավերներին ի պատասխան, աշխարհիկ Թուրքիան նույնպես սկսեց Ադրբեջանում ֆինանսական ներդրումներ անել՝ մզկիթներ ու մեդրեսեներ հիմնելու ուղղությամբ: Անկարան իսլամը դիտարկում էր որպես միջոց՝ ամրապնդելու Ադրբեջանում թուրքական

ներկայությունը: Բաքուն Թուրքիայի նախաձեռնություններին ավելի շատ էր արձագանքում, քան Իրանի, չնայած վերջինիս հետ ընդհանուր պատմական ժառանգությանը: Ադրբեջանը Թեհրանին համարում էր անվստահելի դաշնակից, որը լավագույնս չի օգտագործում իսլամական համերաշխության սկզբունքը՝ Չայաստանի վրա ճնշումներ իրականացնելու համար:

Ադրբեջանի քաղաքական կյանքում Թեհրանի ազդեցության ապացույցն էր 1991-ին հիմնված Ադրբեջանի իսլամական կուսակցությունը, որը շուրջ 50 հազար անդամ ուներ: 1995-ին իշխանությունները փակեցին կուսակցությունը՝ դրսից ֆինանսավորվելու եւ ղեկավարվելու հիմնավորմամբ (կան տեղեկություններ այն մասին, որ կուսակցությունն ընդհատակում գործում է մինչ օրս):

Այս դեպքից հետո որոշվեց, որ բոլոր իսլամական կազմակերպություններն ու մզկիթները պետք է ենթարկվեն ԿՄՎ-ին: 1996թ. Ադրբեջանի խորհրդարանի որոշմամբ արգելվեց միսիոներների գործունեությունը, ինչպես նաեւ պահանջվեց, որպեսզի տեղական կրոնական համայնքները գրանցվեն:

Ընդհանրապես, Բաքվին մտահոգում է մահմեդական տարբեր ուղղությունների արմատավորումը (հատկապես վահաբական, որ հիմնականում ներթափանցում է Չյուսիսային Կովկասից), ինչը կարող է ապակայունացնել իրավիճակը երկրում: Բաքուն գիտակցում է, որ իսլամը կարող է դառնալ անվերահսկելի քաղաքական գործոն Ադրբեջանի ներքին կյանքում, ինչպես նաեւ՝ էթնոդավանական փոքրամասնությունների շրջանում:

Միաժամանակ պետք է նշել, որ Բաքուն դեմ չէ միջազգային իսլամական տարբեր հիմնադրամների եւ կառույցների հետ համագործակցությանը, որոնց միջոցներով Ադրբեջանում հիմնվել եւ հիմնվում են մզկիթներ ու մեդրեսեներ: Ասվածի ապացույցն է 1997-ին քուվեյթյան «Իսլամական ժառանգության վերածնունդ» կազմակերպության՝ Բաքվում կառուցած Աբու Բաքր մզկիթը, որ տեղավորում է ավելի քան 5000 հավատացյալների: Բացի այդ, Ադրբեջանը, որպես կանոն, ակնկալում է միջազգային իսլամական հանրության աջակցությունը Չայաստանի «ագրեսիան» դատապարտելու եւ այդ ուղղությամբ գործնական քայլեր անելու ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ, Ադրբեջանում զգուշանում են կրոնական հուզումներից: 1999թ. Գեկչայ քաղաքի մզկիթում տեղի ունեցան միջ-իսլամական բախումներ, որոնք մեկնաբանվեցին իբրեւ արտաքին միջամտության արդյունք: Նույն թվականին պաշտոնական հրա-

պարակում եղավ այն մասին, որ կրոնական համայնքները շատ հաճախ ԿՄՎ-ին իրազեկ չեն պահում իրենց գործունեության մասին եւ տարածում են պառակտիչ կրոնական գրականություն:

Ադրբեջանական իշխանությունները մշտապես ձգտում են թուլացնել ոչ միայն շիա-սուննի հակասությունները, այլեւ կրոնի դերը երկրի քաղաքական կյանքում: 2001թ. իշխանությունները ճնշեցին Նարդարան քաղաքի ելույթները, որոնք մեկնաբանվեցին իբրեւ երկրի աշխարհիկության դեմ ուղղված բողոքի ակցիաներ:

Ադրբեջանում խորացող սոցիալական լարվածությունն ի հայտ է բերում իսլամի քաղաքականացման միտումներ: Իսլամական կառույցների գործունեությունն առավել արդյունավետ է սոցիալապես անապահով շրջանակներում, որոնք պետության անգործության ֆոնի վրա իսլամի մեջ նեցուկ են տեսնում: Այս առումով, իսլամը զգալի ներուժ ունի՝ դառնալու գաղափարախոսական հենք սոցիալ-քաղաքական շարժումների համար:

## **ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ, ՈՒՐՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ**

*Ստորել ներկայացնում ենք հատվածներ «The National Interest» հանդեսին ԱՄՆ նախկին պետքարտուղար  
Յենրի Բոսինգերի տված հարցազրույցից*

*Յարց* - Ունանք պնդում են, թե սեպտեմբերի 11-ից հետո «աշխարհը փոխվել է»։ ընդ որում, նկատի է առնվում, որ 21-րդ հարյուրամյակի միջազգային համակարգն առավելապես ձեւավորում են ոչ թե ազգային պետությունները, այլ նոր տարրերը՝ ենթապետական կառույցները, վերազգային շարժումները եւ այլն, ինչից հետեւում է, որ սառը պատերազմի ժամանակների Ամերիկայի փորձը դառնում է առավել քիչ արդիական ներկայիս միջազգային քաղաքականության մշակման համար։ Այս առիթով Դուք ի՞նչ եք մտածում։

*Պատ.* - Եհիշտ է, որ միջազգային հարաբերությունների ոլորտ են ներխուժել միանգամայն նոր տարրեր, սակայն առաջին հարցը, որին հարկ կլինի պատասխանել, հետեւյալն է. գոյություն ունե՞ն, արդյոք, միջազգային քաղաքականության ընդհանուր սկզբունքներ, որոնք կարող են կիրառվել ողջ աշխարհում միաժամանակ եւ միեւնույն կերպ։

Աշխարհի տարբեր հատվածներ գտնվում են իրենց ներքին զարգացման տարբեր փուլերում. համապատասխանաբար, տարբեր փուլերում են գտնվում նաեւ զանազան միջպետական տարածաշրջանային միավորումների կառուցվածքները։ Մեր պատկերացումներն այն մասին, թե ինչի ենք ձգտում, պետք է լինեն անփոփոխ, բայց դրված նպատակներին հասնելու միջոցներն անհրաժեշտ է հարմարեցնել տարբեր տարածաշրջաններում գոյություն ունեցող առանձնահատուկ պայմաններին։

*Յարց* - Դուք ի՞նչ կպատասխանեիք նրանց, ովքեր պնդում են, թե այս կամ այն վարչակարգի ուրույն բնույթն այսօր հանդիսանում է Միացյալ Նահանգների հետ հարաբերությունների ձեւավորման առավել կարելուր գործոն։

*Պատ.* - Վարչակարգի ուրույն բնույթը մի գործոն է, որն անհրաժեշտ է հաշվի առնել։ Սակայն ես հարցն այլ կերպ կդնեի. հնարավո՞ր է կողմնորոշվել սոսկ այս գործոնով։ Բացի այդ, վերոնշյալ ենթադրությունը

ելնում է նրանից, թե մենք տիրում ենք այս կամ այն վարչակարգի ներքին կառուցվածքների վրա ազդելու անսահմանափակ հնարավորությունների: Այս հաշվով ես մեծ տարակուսանքներ ունեմ: Քաղաքական մտքի իրապաշտական եւ տեսական (կամ գաղափարապաշտական) դպրոցների միջեւ տարբերությունը, որպես կանոն, նպատակների մեջ չէ: Սովորաբար նպատակները միանգամայն համանման են: Վիճում են նրա շուրջ, թե ինչ կարելի է անել տվյալ ժամանակահատվածում, եւ այստեղ այլընտրանք է առաջանում. կա՛ն կոպտորեն առաջնորդվել նպատակային հայեցակարգի պահանջներով, կա՛ն նրա վրա գործնական սահմանափակումներ դնել՝ այլ նշակույթին ու ձեւավորված հանգամանքներին ադապտացումը դյուրացնելու համար:

*Չարց* - Մտահոգության առարկա է նաեւ այն, թե բուռն կերպով զարգացող Չինաստանը «կմտնի՞», արդյոք, առկա միջազգային համակարգի մեջ, թե՞ կփորձի այն արմատապես փոխել:

*Պատ.* - Ես կասկածում եմ այնպիսի մոտեցման իմաստության մեջ, որի դեպքում Չինաստանի նկատմամբ քաղաքականությունը խարսխվում է այն համոզմունքի վրա, թե Չինաստանը լի է վճռականությամբ՝ ռազմական ուժի օգնությամբ շրջել միջազգային համակարգը: Ինձ առավել ճիշտ է թվում այն ենթադրությունը, թե Չինաստանը, ապրելով տնտեսական աճի բուռն ժամանակաշրջան, միջազգային համակարգում իր քաղաքական ու տնտեսական դերի մեծացման միջոցներ կփնտրի: Եվ մենք պարտավոր ենք ուշադրություն հրավիրել այդ՝ իր էությամբ մրցունակ մարտահրավերի վրա:

Չինաստանի եւ կայսերական Գերմանիայի միջեւ հաճախ անցկացվող զուգադրությունը ճիշտ չէ: Կայսերական Գերմանիան պատերազմ հրահրեց այն քաղաքականության հետեւանքով, որ նա վարում էր 1914 թվականին նախորդող տասնամյակների ընթացքում: Նա իր նավատորմի հզորացման շնորհիվ մարտահրավեր նետեց ծովերում Բրիտանիայի գերիշխանությանը եւ ամեն ինչ արեց Ֆրանսիային ու Ռուսաստանին նվաստացնելու համար: Արդյունքում՝ գերմանացիները գործնականում հարկադրեցին ֆրանսիացիներին ու ռուսներին դաշինք կնքել, որին հետագայում միացավ նաեւ Բրիտանիան:

Մոտ ապագայում Չինաստանը հազիվ թե դիմի ռազմական ուժի՝ որպես իր միջազգային քաղաքականության սկզբունքային տարրի: Եթե չինական տնտեսությունն այսպես հաջողությամբ զարգանում է, ես չեմ տեսնում խելամիտ պատճառ՝ սպասելու, թե Չինաստանը, գտնվելով բավականին հզոր եւ ռազմական մեծ ներուժով երկրների շրջապատում,

ռազմատենչ մարտահրավեր կնետի Միացյալ Նահանգներին եւ իրեն ուժասպառ կանի սպառազինութեան մրցավազքում:

*Չարդ* - Ի՞նչ պետք է անի Միացյալ Նահանգները, որպեսզի ամրապնդի իր գլոբալ առաջատարութիւնը:

*Պատ.* - Ես կխլացնեի գերիշխանութեան հասնելու կոչերը: Ցանկացած կայուն միջազգային համակարգ մասամբ հենվում է ուժերի հաշվեկշռի եւ մասամբ էլ՝ նրանց միջեւ համաձայնութեան վրա: Չի կարելի ապավինել միայն հաշվեկշռին կամ միայն համաձայնութեանը:

*Չարդ* - Կա՞ վտանգ, որ Չինաստանն ու Ռուսաստանը կարող են գնալ մերձեցման, որպեսզի հակակշռեն ԱՄՆ-ին:

*Պատ.* - Եթե խորհենք զուտ ռազմական կատեգորիաներով, ապա հույժ դժվար է ստեղծել կոալիցիա, որը հակակշիռ հանդիսանա Միացյալ Նահանգներին:

Ռուսաստանի մոտ կարող է Չինաստանի հետ մարտավարական մերձեցման գայթակղութիւն առաջանալ: Սակայն Չինաստանի հետ ցանկացած էական ռազմավարական մերձեցում կհանգեցնի Միացյալ Նահանգներից Ռուսաստանի օտարման եւ նրան կոնի կախվածութեան մեջ Չինաստանի աջակցութեանից: Նման վիճակը հակառակ կգործի Ռուսաստանի իրական ռազմավարական շահերին նրա հեռավոր-արեւելյան սահմաններում՝ հաշվի առնելով տեղի բնակչութեան արդեն իրականութիւն դարձած կրճատվելն ու բացասական ժողովրդագրական միտումները:

Մենք չպետք է կենտրոնանանք այն դավերի վրա, որ կարող են մեր դէմ նյութել Ռուսաստանն ու Չինաստանը: Ամերիկյան քաղաքագետներն ավելի իմաստուն կվարվեն՝ ջանքերը սեւեռելով ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Չինաստանի հետ սերտ հարաբերութիւնների հաստատման վրա: Այսպիսի քաղաքականութիւնն ունի ամուր հիմք, քանզի այդ երկրների համար Միացյալ Նահանգների հետ համագործակցութիւնը պայմանավորված կլինի առնվազն նույնպիսի (եթե ոչ մեծ) առավելութիւններով, բայց անհամեմատ փոքր ռիսկով, քան «բարեկամութիւնն ընդդէմ» ԱՄՆ-ի: Ուստի ես կարծում եմ, որ այս առնչութեամբ մենք հաջողութեան բոլոր հնարավորութիւններն ունենք:

Ես չեմ տեսնում ոչ մի իմաստ այն շահարկումներում, թե մենք ինչ պետք է ձեռնարկենք, որպեսզի խոչընդոտենք Ռուսաստանի եւ Չինաստանի միջեւ առավել սերտ կապերի հաստատմանը. ունենք մենք, արդոք, դրա համար բավարար հնարավորութիւններ եւ ո՞վ կարող է դրանից օգուտ քաղել: Մենք պետք է նախելառաջ մտահոգված

լինենք նրանով, թե ինչպիսին են մեր երկկողմանի հարաբերություններն այդ երկրների հետ:

*Չարք* - Ինչպե՞ս էք Դուք գնահատում Յնդկաստանի նկատմամբ ԱՄՆ նոր մոտեցումը:

*Պատ.* - Դա կարելու ու դրական նախաձեռնություն է: Սակայն մենք պետք է հասկանանք, թե այն ինչի վրա է հիմնված: Մեր մերձեցման նպատակն ընդհանուր ազգային շահերի առաջնդման մեջ է, այլ ոչ թե ուժերը Չինաստանի դեմ համախմբելու: Այն չափով, որ Յնդկաստանը ներուժ է կուտակում, այն կարող է դառնալ էլ ավելի ծանրակշիռ գործոն միջազգային ուժերի հաշվեկշռում եւ օգտագործել իր հնարավորությունները ոչ թե Միացյալ Նահանգներին հաճոյանալու, այլ սեփական շահերը պաշտպանելու համար: Ուստի Յնդկաստանի եւ Միացյալ Նահանգների մերձեցման ռազմավարական նպատակն ու փոխշահավետ համագործակցության իրականացման մարտավարական մեթոդները չպետք է ուղղված լինեն Չինաստանի դեմ: Մենք Յնդկաստանի հետ բազմաթիվ այլ ընդհանուր խնդիրներ ունենք, այդ թվում՝ նաեւ շատ կարելու:

Ես կարծում եմ, որ Յնդկաստանը կծգտի սերտ հարաբերություններ հաստատել Չինաստանի եւ Ռուսաստանի հետ: Մեր խնդիրն այն է, որպեսզի ամենատարբեր ոլորտներում մեզ հետ համագործակցության օգուտները միշտ գերակշռեն այդ երկրների համար այլ գայթակղություններին: Այդ՝ վերջնական արդյունքում էլ կայանում է արտաքին քաղաքականության իմաստը:

*Չարք* - Կիրառելի՞ է, արդյոք, նման մոտեցումն Իրանի հանդեպ:

*Պատ.* - Մոտ ժամանակներս մեզ հարկ է լինելու Իրանի վերաբերյալ կարելու որոշումներ ընդունել: Մենք որքանով ենք պատրաստ միջուկային զենքի տարածմանը խոչընդոտելու նպատակով ճնշում գործադրելու մեջ հեռուն գնալ եւ դրա համար ի՞նչ միջոցների ենք պատրաստ դիմելու: Մեզ չի հաջողվի Իրանի վրա ճնշման գործում դիվանագիտական հաջողությունների հասնել առանց Յնդկաստանի, Ռուսաստանի, Չինաստանի:

Նախելառաջ, հարկավոր է համաձայնության հասնել իրանական ծրագրի բնույթի հարցում: Մենք ժամանակի որքա՞ն պաշար ունենք՝ մե՞կ, թե՞ տասը տարի: Այնուհետեւ, անհրաժեշտ է մի կողմից՝ ճնշման մեթոդների շուրջ համաձայնություն դիվանագիտական մակարդակում, եւ մյուս կողմից՝ գրավիչ առաջարկներ: Ռազմական գործողությունը վերջին միջոցն է: Եվ Բուշի վարչակազմը ճիշտ է վարվում՝ «պահեստավորելով» նման հնարավորությունը:

*Չարդ* - Դուք միջազգային համակարգի ճարտարապետն եք եղել այն պատմական ժամանակահատվածում, երբ Միացյալ Նահանգներին վերջնական կործանում էր սպառնում: Սակայն գոյություն ուներ նաև այդ սպառնալիքը կանխելու մեխանիզմ: Արդյո՞ք արդի աշխարհն ավելի անվտանգ է, քան սառը պատերազմի ժամանակներում:

*Պատ.* - Ես կարծում եմ, որ այսօր չկա համաձայնություն այն բանի շուրջ, թե գոյություն ունի ինչ-որ մի գերակայող սպառնալիք: Միջազգային համակարգն առավել անվտանգ է, բայց ավելի պակաս կազմակերպված, քան անցյալում էր: Այսօր քիչ են անմիջական վտանգները, սակայն կառուցվածքային պլանում իրավիճակն առավել սպառնալից է: Ասենք, ԱՄՆ-ի վրա միջուկային հարձակման վտանգն այսօր նվազ հավանական է, բայց սպառնալիքի աղբյուրներն անհամեմատ շատ են, քան քսան տարի առաջ էր:

*The National Interest*  
russ. ru

## **Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>Դավիթ Հովհաննիսյան</b> <b>Ինքնիշխանութիւնի զինուորացի</b> <b>ԵՎ ՆՈՐ ԶԵՎԱՎՈՐՎՈՂ ԱՐԺԵՅԱՄԱԿԱՐԳԸ</b> .....	<b>1</b>
<b>Սեւակ Սարուխանյան</b> <b>ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ԵՎ</b> <b>ՆՐԱ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ</b> .....	<b>5</b>
<b>Սուրեն Սարյան</b> <b>ՀԻՆ «ՆՈՐ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԸ»</b> .....	<b>11</b>
<b>Գագիկ Տեր-Հարությունյան</b> <b>ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ</b> <b>ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ</b> .....	<b>18</b>
<b>Սուրեն Մանուկյան</b> <b>ԼԻՔԱՆԱՆՅԱՆ ՃԳՆԱԺԱՄ.</b> <b>ՀԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ</b> .....	<b>26</b>
<b>Գագիկ Տերտերյան</b> <b>ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ</b> <b>ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ</b> .....	<b>31</b>
<b>Ռուբեն Սաֆրաստյան</b> <b>ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ</b> <b>ՆԵՐԿԱ ՓՈՒԼԸ</b> .....	<b>37</b>
<b>Արաքս Փաշայան</b> <b>ԻՍԼԱՄՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ</b> .....	<b>43</b>
<b>Հենրի Զիսինջեր</b> <b>ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ,</b> <b>ՈՒՐՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ</b> .....	<b>48</b>

*Շապիկի վրա պատկերված է  
Արծվաբեր վանքի թերակղզին  
(Վանա լճի հարավային ափ)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ Օ1Մ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: